ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ՀՈԿՏԵՄԲԵՐ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ Ի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		էջ
1.	Խմբագրական. — Հոգեւորականաց Կուսակրօնութեան Խնդիր եւ Կ. Պոլսոյ Թերթերը.	299
2.	Կեանք Յիսուսի. — Մասն Է.	296
3.	Քարոզ. — Խորհուրդ Ս. Պատարագի.	301
4.	Ապահարզան կամ Անուանապուծութիւն.	311
4.	Թղթակցութիւն. — Նաւակ Մանիսայէն.	318

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն տեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանք, վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանք թղթատարաւ։

Տանկատանի քաղաքաց մէջ ձեռքէ կը ծախուի հատը՝ Երկու (2) Դահեկանի։

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէիս.

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԹԻՒ 20 ԵՐԿՐՈՐԴՏԱՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ԿՈՒՍԱԿՐՕՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ԹԵՐԹԵՐԸ

Մի բարեկամ ղրկած է մեզ Կ. Պօլսոյ թերթերէն այլ և այլ քաղուածներ՝ որք կըպարունակեն տեսութիւններ և դիտողութիւններ կրօնաթերթիս Յուլիսի և Օգոստոսի թիւերու մէջ հոգեւորականաց կուսակրօնութեան մասին հրատարակեալ յօդուածոց վերայ։ Շատ ուրախ ենք որ մեր աշխարհական թերթեր ևս կըհետաքրքրուին այս կարեւոր խնդրով, որ թէ և մասնաւորապէս հոգեւորական դասուն կըվերաբերի, բայց նաև անուղղակի կերպիւ աշխարհական ժողովրդեան կըպատկանի, որոց հովիւներ հանդիսանալու կոչուած են հոգեւորականք։

Այս հատուածներէն մին՝ Սուրհանդակ օրաթերթինը՝ համառօտ ու կոկիկ ամփոփում մը կընէ մեր յիշեալ յօդուածոց, և ապա ենթադրելով թէ յիշեալ յօդուածոց հեղինակն Մանչէսթրի Հայոց Հովիւն է, կըյաւելու.

«Այս այն քահանայն է, որ իր քահանայական պարտաւորութիւնը լիովին չըկրնար կատարել և շատերու դանդատներուն տեղի կուտայ. փոխանակ իր ձեռքը գտնուած թերթը Աւետարանի բարոյականին բացատրութեան և աւելի օգտակար նիւթերու յատկացնելու, իր կոշիկէն վեր եղող այսպիսի անհեթեթ նիւթեր կըքրքրէ և կ'ուզէ որ հանրութիւնը ամբողջ զբաղի, թէ եկեղեցականք ամուրի կեանքին կրնա՞ն համբերել, թէ ո՛չ։

. . . . Մեծ ամօթ է եկեղեցական թերթի մը մէջ այսպիսի

խնդիրներու վրայ գրելը, երբ շատ ամուրի եկեղեցականներ թէ անցեալին և թէ ներկային մէջ եկեղեցւոյ մէջ կը ծառայեն, առանց այդ տեսակ բաներ խնդիր ընելու: .... Արդարև երանելի և երջանիկ մարդեր են մեր այս ազգ քահանաներ (Տէր Վռամշապուհ և Տէր Թէոդորոս), որոնք այսպիսի խնդիր մը փոխանակ Հոգեւոր վերին իշխանութեան ներկայացնելու, հրապարակ կը հանեն բոլորովին արտառոց և անհեթեթ կերպով:»

Ահա այն փաստերն որով Սուրհանդակ կ'աշխատի ջրել՝ «արտառոց և անհեթեթ» նկատելով՝ եկեղեցական կանոնաց, մատենից և պատմութեան զգուշաւոր քննութեամբ պատրաստուած հետազօտութիւնը մի այնպիսի խնդրոյ վերայ, որ մեր ներկայ եկեղեցւոյ բարգաւաճման և յառաջադիմութեան և համայն հայ քրիստոնէից կենցաղավարութեան համար ամենամեծ կարեւորութիւն ունի: Մեր յառաջ բերած բոլոր պատմական և քննական փաստերն անզօր և անհեթեթ են Սուրհանդակի համար, որովհետեւ Մանչէսթրի քահանայն «իր քահանայական պարտաւորութիւններն լիովին չկրնար կատարել, և շատերուն գանգատներուն տեղի կուտայ.» այսինքն, որովհետեւ յիշեալ քահանայն Մանչէսթրի մէջ պարտէզ մը ունի զոր մշակել կուտայ կամ կը մշակէ, և ի պարտիզի անդ կրիկ հառուս մը ունի, և հուպ ընդ նմին՝ վրան մը սարքած է, որուն մէջ ամառն իւր ընտանեաց հետ մէկ տեղ կընստի՝ ջրջապատեալ բաղմատեսակ, գունագեղ և անուշահոտ ծաղկօք: Ուրիշ գանգատ մի եւս, ճեզուէի կոթը փրթելուն պէս՝ եկեղեցւոյ հաշուոյն նորոգել կրտայ: Իւր տան մէջ սեւ գամիս մի ունի, որ Առաջնորդարանի դռներն շատ ամուր կողպելու պէտք չի թողուր. կատու մ'ալ ունի, որոյ ձեռքէն մուկերն աղիողորմ կը գանգատին: Այս ամենը կը ցուցնէ, ըստ Սուրհանդակի, որ եպիսկոպոսունք և վարդապետք՝ Աստուծոյ մնացեալ հողեղէն արարածոց պէս կին ունենալու չեն, երիտասարդ այրի քահանայք կաթնկեր որբերով ջրջապատեալ՝ տառապանաց մէջ պիտի ապրին ցվախճան կենաց իւրեանց, կամ ծանր դայթակղութեանց տեղի պիտի տան: Այս պատճառաւ իսկ կրօնական և աստուածաբանական թերթի մը «կօշիկէն շատ վեր» կը համարի հոգեւորականաց կուսակրօնութեան խնդրոյ հետազօտութիւնն. և կը կարծէ թէ կ'ուզենք «որ հանրութիւնը ամբողջ զբաղի, թէ եկեղեցականք ամուրի կեանքին կընա՞ն համբերել, թէ ո՛չ:» Միայն այս կէտին մէջ սակաւ ինչ թիւրիմացութիւն կը-

տեսնենք Սուրհանդակի յիշեալ յօդուածին մէջ. ամուրի կեանքին համբերել կարենալու խնդիրն բոլորովին դուրս թողած ենք մեր հետազօտութենէն, և եթէ նորէն կարդալու լինի մեր յիշեալ երկու յօդուածները, պիտի տեսնէ որ այդ մասին ամենուին խօսք բացուած չէ։ Այս միակ բացառութեամբն, Սուրհանդակի ամբողջ յօդուածին մէջ որեւէ ներքին այլանդակութիւն չենք տեսներ. ամէն տող և ամեն դարձուած յարմարաբար կը պատշաճի յօդուածի ամբողջութեանն, և բովանդակ յօդուածն կը ներկայացնէ գրողի խակատիպ մտածմանց և զգացմանց ճշգրիտ պատկերն։

Սուրհանդակ իւր անվիճելի փաստերն յառաջ կը տանի երբ կ'ասէ. «Մեծ ամօ'թ է եկեղեցական թերթի մը մէջ այսպիսի խնդիրներու վրայ գրելը, երբ շատ ամուրի եկեղեցականներ թէ անցեալին և թէ ներկային մէջ Եկեղեցւոյ մէջ կը ծառայեն, առանց այդ տեսակ բաներ խնդիր ընելու։» — «Արդարեւ երանելի և երջանիկ» աշխարհական մի է մեր Սուրհանդակի յօդուածագիր, որ մեր ամուրի կղերի կացութիւնը չի ըմբռներ։ Բնականաբար շատ քիչ ամուրի եկեղեցականներ կը համարձակին հրապարակաւ մի այնպիսի խնդրոյ վերայ գրել կամ խօսիլ որ ամենէն յառաջ անձնապէս իրենց կը պատկանի, և բերան բանալուն պէս, ինչքան Սուրհանդակներ կան պիտի գոչեն. «Սա զգայամոլ եպիսկոպոս կամ վարդապետ կուզէ հանրութիւնը իւր անձնական վիճակով և տրամադրութիւններով զբաղեցնել։» Մինչդեռ անոնց Տէրտէր մը կրնայ ամուրիութեան խնդիրն անաչառութեամբ և անաղարտ քննել և իւր կրնի հաւզին, պարտէզին, վրանին, և ճիզուէի կոթին ուղղեալ հարուածոց վերայ անտարբերութեամբ զբօսնուլ։ Սակայն եթէ Սուրհանդակի այս ասաիճան միամիտ յօդուածագիր կուզէ ստուգիւ գիտնալ թէ նոյն իսկ իր քթին տակ ապրող ամուրի կղերն ի'նչպէս կը տանի իւր ամուրիութեան լուծն, յատկապէս կը յանձնարարենք որ կարդայ մեր Սեպտեմբերի թուոյն մէջ հրատարակեալ նամակն Արժ. Տէր Յովհաննէս Աւագ քահանայի Մկրեան, որ իւր երկարամեայ քահանայական պաշտօնի մէջ ամենամեծ հայաբնակ քաղաքի ամեն դասակարգի վիճակն մեղմէ հաղար անգամ աւելի լաւ ուսումնասիրած է, և պէտք է խոստովանինք, Սուրհանդակի չգիտցածներն ալ գիտէ։ Նոյնպէս կարդալ կը յանձնարարենք Հորոյի ծանօթութիւնն այս մասին Բիւզանդիոնի 1512 թուոյն մէջ։

Երբեմն մեր աշխարհական Կ. Պոլսեցի երիտասարդներ (իմա'

հրապարակագիրներ) սովորութիւն ունէին հայ եկեղեցականաց վերայ նոյն աչքով նայիլ որպէս Փարիզցիք կը նայէին գաղղիական կղերին վերայ. Փարիզի նորաձեւութեամբ իմն կ'աշխատէին (իբր թէ) մեր խեղճ ու պարզամիտ եկեղեցականաց «քլէրիկալ ազդեցութիւնը», «ճիզուիթութիւնը» կոտրել։ Իսկ այժմ մեր առջև ունինք հայ հրապարակագիրներ որք կարծես ամեն ճիգ կը թափեն ազգային լրագրութիւնը ստորնացնել. ուզածդ ժամանակ իրենց գոյնը կը փոխեն. այսօր «ճիզուիթ» կամ ամենամոլեռանդ «քլէրիքալ», վաղն անհաւատ ու անաստուած, միւս օրն ինքզինքին բարեպաշտ և եկեղեցասէր ձեւացնող, ժողովրդեան ազիտութեամբ մուտ գտած ամենաոչինչ անապաշտութիւններն և հակաքրիստոնէական աւելադրութիւններն թատերական նախանձախնդրութեամբ պաշտպանելով՝ «զմբաղուկս քամեն և զուղտս կլանեն.» այսօր ամենչան մէկը կը բարձրացնեն մինչեւ յերկինս որպէս զի միւս օր կարենան մինչեւ յանդունդս դժոխոց գլորել։ Եւ այս «աշխարհական» մարդիկ այսօր եկեր են մեզ կը սեն. «Մեծ ամօթ է եկեղեցական թերթի մը մէջ այսպիսի խնդիրներու վերայ գրել.» ամօթ է եղեր քարոզել մեր Ս. Եկեղեցւոյ պատգամն թէ «Պատուական է ամուսնութիւն, և սուրբ են անկողինքն նոցա,» ամօթ է եղեր պատմական փաստերով և մեր Եկեղեցւոյ պաշտօնական գրոց վկայութեամբ հաստատել թէ մեր Ս. Եկեղեցին աշխարհի մէջ պաշտօն վարող հոգեւորականներէն ամենեւին կուսակրօնութիւն չի պահանջեր։ Մենք այս ամօթը մեր վերայ կ'առնունք, և Սուրհանդակի և իւր նմանեաց փաստաբանութեան պարծանքն ալ իրենց կը թողունք։

Մանզունեի Էֆֆեար հեռեւեալը կը գրէ. «Այս առթիւ երկու բառ ալ Զուղայեցիին, որ նախնեաց գործածած «Առաջնորդ» բառին նշանակութիւնը թերեւս աղէկ չը դիտնալուն համար անիծեալ կը նկատէ. — Վասն որոյ կանոն է Ս. Հայրապետացն, ըն՝ կուսակրօն փահանայ ըն առաջնորդ լինի ժողովրդեան, անէծեալ է ինքն և ժողովուրդն իւր։ — Տէ՛ր Զուղայեցի՛, այլ է աստուածաբանութիւնը, ա՛յլ է հայագիտութիւնը. Նախնեաց մատենագրութիւնը հասկնալու համար պէտք է գրաբարը հիմնապէս ուսումնասիրել։ «Առաջնորդ» բառը՝ այդ պարագային մէջ, քահանայից համար ի կիր առնուած է։ Ի նախնումն քաղաքի մը կամ աւանի մը առաջնորդը՝ ամուսնացեալ քահանաներն էին, ինչպէս

հիմայ ալ ժողովրդեան իսկական առաջնորդը՝ հովուողը՝ միթէ քահանաները չե՞ն։»

Շնորհակալ ենք Մանգուլեի Էֆֆեարէն իւր բարեմիտ առաջարկութեանց համար, որով կը յանձնարարէ մեզ աստուածաբանութեան հետ մէկ տեղ հայագիտութիւն և մատենագրութիւն ուսումնասիրել։ Նոյնպէս շնորհակալ ենք «Առաջնորդ» բառի նշանակութեան համար, որ կըսէ թէ «ի նախնումն քաղաքի մը կամ աւանի մը առաջնորդը՝ ուղղանացեալ քահանաներն էին.» (Մանգուլեի այս պարբերութիւնը՝ քերականական մեզ անծանօթ համաձայնութիւն մի է անշուշտ, արդիւնք՝ հայ մատենագիտութիւնն ու գրաբարն հիմնապէս ուսումնասիրելու։) Ուրախ ենք որ «Առաջնորդ» բառն այդ նշանակութիւնն ունեցած է ի հնումն։ Մենք ալ կըսենք՝ քաղաքաց եւ աւանից առաջնորդներն հիմա ալ ամուսնացեալ քահանաներ թող լինին, եւ կուսակրօն անձինք հրաւիրուին քաղաքներէն եւ աւաններէն հեռանալ՝ իւրանց վանքերն առանձնանալ՝ եւ Եկեղեցւոյ այժմ լքեալ եւ ամայացեալ գրական անդաստանն մշակել, որպէս զի ոչ իրենք եւ ոչ յիշեալ քաղաքաց եւ աւանից ժողովուրդն Մայր Մաշտոցի եւ Ս. Հայրապետաց անէծքին ենթարկուին։

Բիւզանդիոնի մէջ Հռոմ այլ և այլ ծանօթութեամբ հանդերձ հրատարակած է մեր Յուլիսի ամբողջ խմբագրականն։ Այդ ծանօթութեանց մի քանիսն խնդիրն լուսաբանելու կը ծառայեն, և մի քանիսն ևս թիւրիմացութեան արդիւնք են։ Հռոմ ընդհանրապէս մեր ներկայ սովորութեան հակառակ ծայրայեղութեան կը միտի, և մեր ժողովրդական մնապաշտ երեւակայութիւններն իբրեւ եկեղեցւոյ կանոն հաստատել կը ջանայ։ Ցիշեալ յօդուածոց մէջ մենք աշխատեցանք օրինաւոր վկայութեամբք ի Ս. Գրոց և յԵկեղեցական մատենից ցոյց տալ որ Հոգեւորականութիւնը որ և է ընկերային կամ ընտանեկան յարաբերութենէ անկախ վիճակ մի է։ Քահանայութիւն և եպիսկոպոսութիւն որեւէ յարաբերութիւն չունին կին ու զաւակ ունենալու կամ չունենալու հետ։ Ինչպէս եկեղեցականաց անպայման ամուսնութիւնը վնաս մի է, նոյնպէս անպայման ամուսնութիւնն ևս մեծ չարիք մի է մեր Եկեղեցւոյ մէջ. իսկ անպայման զաւակ ունենալն մի սոսկ ժողովրդական մնապաշտութիւն է՝ Ս. Գրոց միտքն լաւ չըմբռնելէն յառաջ եկած։ Այս թիւրիմացութեան ակնյանդիման օրինակն

կընդերկայացնէ Հորոյ իւր երկրորդ ծանօթութեամբ, յորում «Պարտ է եպիսկոպոսին միոյ կնոջ այր լինել», եւ «որդեակս ունիցի» խօսքերը կրմեկնէ, և, ինչպէս սովորութիւն է Կ. Պոլսոյ հրապարակագրութեան մէջ, աստուածաբանութենէ անձնականութեան կ'անցնի, և կրկարծէ թէ մեր յիշեալ յօդուածի մէջ այդ մասերն թեթեւ անցեր ենք, որովհետեւ կարծեցեալ յօդուածագիրն անզաւակ քահանայ մի է։ Ոչ թէ միայն այս չափովը կրշատանայ Հորոյ. իւր «աստուածաբանութիւնը» յառաջ կրտանի և կ'առաջարկէ ի լուր ամենայն աշխարհի որ այդ անզաւակ քահանայն մէկ կամ երկու որբ որդեդրէ։ Այս բոլոր անոյշ խօսքերովն հանդերձ Հորոյ չէ կրցած տեսնել որ «Պարտ է եպիսկոպոսին միոյ կնոջ այր լինել» նախադասութեան մէջ շեշտը «միոյ» բառին վերայ է. այսինքն, եպիսկոպոսն կամ քահանայն (յառաքելական դարու եպիսկոպոսութիւն քահանայութենէ տակաւին որոշուած չէր) եթէ ամուսնական կեանք վարել ուզէ, պէտք է որ միակին լինի, մէկ կին ունենայ, ոչ թէ մէկէն աւելի, որպէս սովոր էին ունենալ Հրեայք և հեթանոսք։ Հորոյի մեկնութեան միտքն յայտնելու համար՝ պէտք էր այսպէս գրել. «Պարտ է եպիսկոպոսին ամուսնացեալ լինել, կամ կին ունել։» Այսու աղատ կրթողու Սրբազան Առաքեալն որ ցանկացողք ամուրի մնան. իրեն պէս լինին, որ կարօղն է տանիլ տարցի։ Իսկ այն եպիսկոպոսունք և քահանայք որք ամուսնացեալ կեանք կընտրեն, քրիստոնէաբար միայն մէկ կին ունենալով չատանան։ Նոյնպէս «Որդեակս ունիցի որ է հնազանդութեան կայցեն ամենայն պարկեշտութեամբ» տան մէջ շեշտը վերջին (նօտրագիր) բառերի վերայ է։ Միտքն է թէ եպիսկոպոսի կամ քահանայի բոլոր պարագայք օրինակելի լինելու են, եթէ զաւակ ունենայ, զաւակներն ևս բարի և հնազանդ ու պարկեշտ վարք ունենան։ Բայց զաւակ ունենալն իբրեւ քահանայութեան անհրաժեշտ պայման նկատել վերոյիշեալ խօսքերի հիման վերայ, Ս. Գրոց միտքն չհասկանալ ասել է։

Հորոյ իւր երրորդ ծանօթութեամբն մեզ այնպէս կրթուի որ չափէ դուրս խստութեամբ կրդատապարտէ ամուրիութիւն եւ վանականութիւն, որովհետև իւր տեսածներն ի Կ. Պոլիս և իւր լսածներն հայ որպէս և օտարազգի վանական միաբանութեանց նկատմամբ արդարացուցած չեն այն վճիռ թէ «կուսակրօնութիւն անձնուիրութեան ամենաբարձր օրինակն է»։ Մենք ևս աննպատ բաներ տեսած և լսած

ենք վանականաց մասին. բայց միւս կողմանէ նպաստաւոր և պատուական օրինակներ ևս շատ տեսած ենք թէ հայ և թէ օտարազգի վանականաց մէջ։ Ի սկզբանէ անտի Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ կուսակրօնութիւնը առաքելական յանձնարարութեամբ և օրինակաւ մեծ դեր կատարած է, և անհատ վանականաց անարժանութեամբն ամբողջ հաստատութիւնը չի կրնար դատապարտուիլ։ Բուն խնդիրէն կը շեղինք երբ այսպիսի մանրամասնութեանց մէջ կը մտնենք, և մէկ ծայրայեղութենէ միւս ծայրայեղութեան մէջ կ'իյնանք։ Արժ. Տէր Վռամշապուհ Քահանայ մէկ պարզ և միանգամայն նախկին կաթուղիկէ որպէս և մեր ներկայ Եկեղեցւոյ պաշտօնական օրինայ համաձայն կանոն առաջարկած էր այս մասին. — «Եկեղեցականաց կուսակրօնութեան կամաւոր լինելն յամենայն ժամս, և ամուսնաւոր կեանքի աղտաւորութեանն՝ նմին նման։» Ոչ Սուրհանդակի էլերիտելութիւնը և ոչ Հորոյի խստապահանջութիւնը։ Հոգեւորականութիւնը այլ է. վանականութիւնը՝ այլ. Մէկը միւսի հետ ոչ կապելու է, ոչ խառնելու է, և ոչ շփոթելու է։ Վանականին՝ իւր վանքն. և եպիսկոպոսն ու քահանայն իւր հօտն ու ժողովուրդն։

Հորոյի վերջին ծանօթութիւն մարդկօրէն խօսելով՝ կարի յուզիչ և սրատուչ է։ — «Մինչև քահանայից՝ հանդէպ ամուրի կղերին ունեցած դիրքը չբարեփոխուի, մինչեւ նիւթական օրինաւոր կացութիւն չապահովուի անոնց, շնորհքով դիրք ու հանարում ունեցող մարդ քահանայ չըլլար։» — Աշխարհային տեսակէտով շատ ուղիղ է. բայց անձնական պարտ ու պատշաճ հանգստութեան և պատուոյ հոգը տանելէն զատ հայ քահանայութեան ցանկացողի համար մի ուրիշ կարեւոր նկատում ևս կայ, այն է քահանայից ներկայ անկեալ վիճակն բարձրացնել. և այն մարդը որ կը զգայ թէ քահանայութեան արժանաւորութիւն ունի, առանց որ և է ուրիշ նկատում ունենալու, իմնալու՝ ստորնանալու է, հայ ընկերութեան այդ ամենէն անարդ դասակարգին անդամ լինելու է, այդ խոնարհ դասակարգի ցաւերն ու վիշտերն ամբողջովին իւր վերայ առնելու է, և իւր եղբայրներն քաջալերելով և խրախուսելով՝ բարձրացնելու եւ ինքներն անոնց հետ մէկ տեղ կամաց՝ կամաց բարձրանալու է։ Այս ցանկալի նպատակի իրագործումն թերեւս տարիներ եւ դարեր տեւէ, բայց միակ ճանապարհն այս է. ուրիշ ճանապարհ չկայ։ Ուրեմն հրամեցէ՛ք, Հայր Հորոյ։

ԿԵԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ

ԻՐ ԾՆՆԴԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ ՓԱՌՕՔ Ի ՅԵՐԿԻՆՍ

Ի ԳԵՐ. ՏԷՐ ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՇԻՇՄԱՆԵԱՆ

Է

Երիտասարդութիւն Յիսուսի եւ Անոր բարուն կեանքը Նազարեթի մէջ։

Ինչ ըրաւ Յիսուս իր տասներկու տարեկան հասակէն ետքը՝ մինչեւ այն օրը, այսինքն մինչեւ իր երեսնամեայն՝ որմէ ետքը սկսաւ հրապարակաւ քարոզել իր Աւետարանը։ — Իր կենաց այս երկար ժամանակամիջոցը Աւետարանին սա՛ մէկ քանի բառերուն մէջ ամփոփուած է. — «Եւ էջ ընդ նոսա և գնաց ի Նազարէթ և էր նոցա հնազանդ, և մայրն նորա պահէր զամենայն զբանսն ի սրտի իւրում։ Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հասակաւ, և շնորհօք Աստուծոյ և ի մարդկանէ» (Ղ.-Կ. Բ. 50-51։)։

Աստուա՛ծ իմ Յիսուս, տասներկու տարեկան հասակէդ ետքը՝ յորում Իսրայելի Դպիրներն ու բարեւնիներն հիացուցիր, որչա՛փ կարճ է նկարագիրը Քու տասներեւութամեայ կենցաղիդ, որչա՛փ կարճ՝ նոյն իսկ օրինաւոր հետաքրքրութիւն մը յաւելցնելու համար... Եւ սակայն որքան համառօտ ալ ըլլան Աւետարանի այս խօսքերը, ամենամեծ սքանչելիքն է Յիսուսի կենաց, սքանչելիք՝ որ մեզ, մահկանացուներուս բարձրագոյն դասեր կ'աւանդեն։ Բացատրենք Ս. Աւետարանչին յիշեալ խօսքերն ու տեսնենք։

Յիսուս՝ իր աստուածային իմաստութեան մէկ քանի ճառագայթները արձակելէն ետքը, ըստ վկայութեան Աւետարանին, եկաւ Տաճարէն ու Նազարեթ գնաց իր ծնողացը հետ։ — Ծաղկի մը նման՝ դեռաբոյս իր կոկոնին մէջ, որ իր կենդանի գոյները կը ծածկէ մարդկային աչքերէ, Յիսուս կը մնայ թաքուն և անծանօթ աշխարհի, այնպիսի փոքրիկ քաղաքի մը մէջ որ ամէնուն արհամարհանք կ'ազդէր։ Բայց երեսուն երեք տարի աշխարհի վրայ կեանք ունենալու սահմանուած ըլլալով հանդերձ, ինչու՞ միայն երեք տարիները կ'ընտրէ մէջոց իր փրկչական հրապարակային գործունէութեան։ —

Յիսուս այն ատեն միայն իր պաշտօնը գործադրել ուզեց՝ երբ իր հասակին հետ, իբրեւ այր կատարեալ, իր խօսքերն ալ կրնային հեղինակութիւն ունենալ։ Հրէից մէջ, սովորաբար, մարդ մը մինչեւ որ երեսուն տարեկան չըլլար, հրապարակային կենցաղ չէր կրնար ունենալ, ուստի չ'ուզեց Յիսուս խոտորիլ ընդունուած այս սովորութենէն, մանաւանդ թէ՝ չ'ուզեց, վաղահաս համբաւով մը, իր վրայ հրաւիրել հրէական ժողովրդանոցի ապականուած վարդապետներուն հեռը, նախանձն ու ատելութիւնը։ Բայց այս պատճառներէն զատ, Յիսուս, իբրեւ Որդի մարդոյ, ուրիշ գերագոյն դաս մըն ալ տալ ուզեց մեզ։ Հաճեցաւ, իր երկնային վարդապետութեան լոյսերը մարդկային ոգի վրայ սփռելէ և, չարչարանօք ու Ս. Արեան հեղմամբը, զմարդ փրկելէ առաջ, իր առանին առաքինութեամբը ու մեկուսացած կենցաղովը օրինակ մը տալ մարդկային կենաց. սորվեցնել թէ՝ որքան բարի է աշխարհի ապականութիւններէ հեռու մնալ և առաթուր կոխտել մարդկային ամբարտաւանութեան, հպարտութեան, ինքնասիրութեան, ցուցամոլութեան այն բուռն բորբոքը՝ որ շատ անգամ նոյն իսկ քրիստոնէական մարդասիրութեան որ և է պարտք մը կատարելու առաքինութիւնովը կըծպտի և այնպէս կ'երեւայ։ Երկար կ'ըլլայ հոս բացատրել թէ՝ մարդիկ ամենագոյն բարիք մը որպիսի՛ մեծամեծ ցոյցերու կուզեն ենթարկել, ի՛նչ գովեստներու, ո՛րքան դրուատիքներու...։

Այսպէս ուրեմն Յիսուս թաքուն ու մենիկ կենցաղ մը ունեցաւ Նազարեթի մէկ անկիւնը քաշուած, առանց փառքի հետապնդելու, վասն զի ճշմարիտ իմաստութիւնը զայս կը պահանջէր։ Իր արժանիքը, իր փառքը Հօր Աստուծոյ առջեւն էր, բայց ինքը, իբրեւ որդի մարդոյ, առաքինութեան տիպար մարդկութիւն մը պէտք էր ցոյց տար, ուստի կ'ըսէ Սրբազան Աւետարանիչը — «Եւ էր նոցա հնազանդ»։

Այո՛, հնազանդ էր անոնց՝ իր ծնողացը... և ես սարսափով կըհիանամ, երբ այս խօսքը կըլսեմ։ Որդի Աստուծոյ հնազանդ իր ծնողացը՝ որոնք իր ստեղծած ծառաներն են, հող և մոխիր՝ իր Աստուածային անսահմանութեան առջեւ...— և սակայն Յիսուսի գործոց բովանդակութիւնը նոյն իսկ հնազանդութեան մէջ էր... հնազանդ, ոչ միայն իր ծնողացը, այլ նաև «հնազանդ մահու և մահու խաչի»... այս է հրաշալիքներուն հրաշալիքը, այս է գերաստուածային գործը մարդացեալ Աստուծոյն... վասն զի հնա-

զանգութիւնն է մարդկային կենաց ամենէն բարձր արժանիքը և Յիսուսի օրինակը յաւիտենական դատապարտութիւնը պիտի ըլլայ ամէն անոնց՝ որ ահնազանդ են օրինաւոր իշխանութեանց։

Հնազանդ էր Յիսուս, և ի՞նչպէս. — Մարիամու և Յովսեփայ կամքը իբրև Հօր Աստուծոյ կամքը նկատելով։ Իր ներքին մարդուն մէջ կեանք կուտար հնազանդութեան սիրով և յարգանօք, եւ արտաքուստ, օրինակ կ'ընծայէր զայն՝ իր գործոց ուղղութեամբը։

Հնազանդ էր Յիսուս, ինչու՞ համար. — որպէս զի իր օրինակաւը և զմեզ հնազանդեցնէ Աստուծոյ, որպէս զի հնազանդութեան արժանիքը բարձրացնէ նուիրագործելով զայն իր անձին մէջ։

Հնազանդ էր, ի՞նչ բանի մէջ. — Ամենէն պարզ, ամենէն հասարակ, ամենէն տարժանելի գործերու մէջ, վասն զի անոնք՝ որ տեսան զՅիսուս իր թաքուն կենաց մէջ, ուրիշ բան չի նշմարեցին՝ եթէ ոչ՝ գործաւոր մը որ կ'աշխատէր։ Յովսեփի հիւսն էր, Յիսուս ալ հիւսն մը եղաւ, իր հայրենակիցները զինքն այնպէս ճանչցան, — «Ոչ՞ սա է Որդի հիւսանն՝ որոյ մեք գիտեմք զհայրն», կ'աղաղակէին՝ երբ Անոր քարոզութիւնները կը լսէին։ Այս աւանդութիւնը կար նախնի Քրիստոնէից մէջ։ Դ. դարու Յոյն Պատմագիր մը՝ Սոզոմենոս, իր Եկեղ. Պատմութեան մէջ կ'ըսէ թէ՝ Անտիոքացի ճարտար Հռետորը՝ Լիբանիոս (314 - 319) օր մը հեգնաբար կը հարցնէ քրիստոնէի մը — «Հիւսան որդին ի՞նչ կ'ընէ» — Քրիստոնեան պատասխանելով կ'ըսէ, «Յուլիանոս ուրացող կայսեր դագաղը շինելու կ'աշխատի»։

Այս այն Յուլիանոսն է (կայսր յ. 361 - 363) որ քրիստոնէութեան մէջ զարգանալով հանդերձ՝ ուրացաւ իր հաւատքը և ամէն ջանք ըրաւ որ հեթանոսութիւնը հաստատէ, բայց երբ Պարսից դէմ պատերազմ մղած ատեն չարաչար վիրաւորուեցաւ, իր վէրքերէն հոսած արիւնը իր ափովը ժողովելով դէպ ի երկինք նետեց ու պոռաց՝ — «Յաղթեցիր, ով Գալիլեացիդ»։

Ի՞նչ դիրք բռնած էր Մարիամ հանդէպ իր որդւոյն՝ ա-

նոր այս կենցաղին մէջ. — «Եւ մայրն նորա պահէր զամենայն զբանսն ի սրտի իւրում»։ Յիսուսի գործն էր հնազանդութիւն և աշխատութիւն իր հիւանդութեանը մէջ. իսկ Մարիամու գործն էր՝ դիշեր ցերեկ խորհիլ ամէն այն բաներուն վրայ՝ զորս կըլսէր ու կըտեսնէր։ Արդեօք ի՞նչ կըտեսնէր և ի՞նչ կըլսէր... — զՅիսուս միայն կըտեսնէր և զՅիսուս կըլսէր, զՅիսուս՝ Որդին Աստուծոյ և իր Միածին Որդին՝ որ հասարակ մահկանացուի մը պէս կ'ապրէր. կըպահէր իր մեծութիւնը և իր անսահման ամենակարողութիւնը՝ հնազանդութեան և աշխատութեան քօղին տակ, կըխոնարհէր և, իր մարդկային վարմունքին մէջ, չէր ուզեր վիշտ ու նեղութիւն պատճառել իր ծնողաց, մինչդեռ տիեզերքը կըսարսռեցնէր, ու երկինք կըդողային իրմէ։ Ահա այս բաները կըպահէր Մարիամ իր մտքին մէջ և ասկից զատ ուրիշ գործ չ'ունէր. և սակայն, ո՜հ, ո՜րքան կըբարձրանար Մարիամ՝ երբ կըխոնարհէր Որդւոյն հետ... և յետոյ երբ Յիսուս ցոյց կուտայ ինքզինքը, երբ իր վարդապետութիւնները կըսկսի, երբ անթիւ հրաշքներ կըգործէ, երբ կըչարչարուի ու կըխաչուի, և երբ՝ մեր փրկութեան գործը աւարտելով, մեռնելու ատեն, իր սուրբ մայրը կըյանձնէ իր սիրելի աշակերտին, երբ փառօք երկինք կըհամբառնայ, այս երկար ժամանակամիջոցին մէջ ի՞նչ կընէր դարձեալ Մարիամ. — միշտ Յիսուսի վրայ կըխորհէր, «Պահէր զամենայն զբանսն», աստուածային սքանչելեաց վրայ կըխորհէր, և կըցանկար իր Որդւոյն նմանիլ և յառաջ երթալ Անոր Սիրոյն մէջ։

Արդ՝ Յիսուս մեզ սորվեցուց միշտ յառաջդիմել, ի բարին և ի կատարեալն։ Իր օրինակաւը սորվեցուց մեզ ըսելով — «Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հասակաւ և շնորհօք Աստուծոյ և ի մարդկանէ»։ Ի՞նչ որ ըսաւ Ս. Աւետարանիչը Յիսուսի Մանկութեան համար, նոյն կըկրկնէ հոս և անոր երիտասարդութեանը համար։ Ըստ մարդկային օրինաց կըզարգանար միշտ։ Աբեւուն գունաը իր մեծութեան մէջ միշտ նոյնն է, բայց երբ իր հորիզոնին վրայ կ'երեւնայ, պայծառագոյնս կըփայլի, այսպէս և Յիսուս,

Արեգակն արդարութեան, պատանեկութեան դէմքին տակ ծածկուած, ժամանակին հետ, աւելի հեռուները կ'արձակէր տակաւ իր ճառագայթները։ Տարիներու ընթացքին հետ իր գործերն ու խօսքերն ալ սքանչելի եղան առաջի Աստուծոյ և մարդկան։

Յիսուս կը յառաջանայ իր պարտուց գործադրութեանը մէջ։ Ասկից կը հետեւի որ՝ մեր բարոյական յառաջդիմութիւնը՝ կախում չ'ունի մեր գործերուն բնութենէն, այլ՝ մեր ներքին դիտակցութենէն՝ որ մեր գործերը կը կենդանացնէ։ Հասարակ գործոց մէջ յառաջ երթանք, մեծ գործերը մեր ետեւէն պիտի հասնին։ Այսպէս զարգացաւ Յիսուս, այսպէս զարգանանք և մենք։

Այո՛, յառաջ երթանք միշտ ու չըսենք — «ալ բաւական է»։ Միշտ քաղցած ու ծարաւած ըլլանք արդարութեան որպէս զի անդադար զարգանանք առաքինութեան մէջ, որովհետեւ մեր ծառայութիւնը առ Աստուած՝ չունի որոշեալ սահման մը, այլ՝ մինչեւ ցգերեզման կը շարունակէ որմէ ետքը նման Յիսուսի, յաւիտենական կեանց մէջ աստուածային փառօք պիտի յաղթանամք ցյաւիտեան։

ՔԱՐՈԶ

ԹՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

(*Խօսեցեալ ի Զ. Կիւրակէի զկնի Հոգեգալստեան յԱզգ. Եկեղեցւոջ Մանչէրի։*)

Կերին ամենեքեան եւ յագեցան. *Մատթ. ԺԴ. 13.*

Այս աւուր Աւետարան կը պատմէ Քրիստոսի այն հրաշից մին զոր նա իւր երկրաւոր անօրէնութեան միջոցին ժամանակ առ ժամանակ կը գործէր՝ մասամբ հիւանդաց և կարօտելոց խղճալի դրութիւն բարւոքելու համար, բայց առաւելապէս իւր երկնային առաքելութիւն և պաշտօն ապացուցանելու համար, որպէս զի մարդիկ այդ միջոցաւ հրապուրուին հաւատալ Քրիստոսի, և իւրեանց հոգւոց հիւանդութիւն և խղճալի վիճակ բարւոքել կարենան։ Մարմնաւոր հիւանդութիւնք և կարօտ բնական միջոցաւ և առանց աստուածային հրաշալի միջամտութեան ևս կարին ամոքուիլ. բաց աստի մարմնաւոր ախտերէ բժշկուիլն կամ չբժշկուիլն այս վաղանցիկ կենաց համար շատ մեծ նշանակութիւն չունի. մի քանի տարի աւելի կամ պակաս ապրիլն շատ տարբերութիւն չի աներ մեզ համար։ Բայց անմահ հոգին ախտացեալ թողուլ, յաւիտենական կենաց համար բաւական պաշար չպատրաստել՝ շատ մեծ նշանակութիւն ունի. շատ մեծ տարբերութիւն կ'անէ։ Ուստի Քրիստոս՝ որոյ գլխաւոր վարդապետութիւն էր՝ «Հոգի առաւել է քան զմարմին», իւր հրաշագործութեանց միջոցին՝ յաւէտ մարդկան հոգւոց փրկութիւն և բարւոքումն ի նկատի ունի քան թէ մարմնաւոր հանգիստ։ Այսպէս երբ խուռն բազմութիւն շրջակայ գիւղերէ և քաղաքներէ Քրիստոսի կը հետեւէին նորա զմայլեցուցիչ քարոզները լսելու համար, և երկար ժամեր նորա հոգեդրաւ խօսքերով յափշտակուած՝ ուր լինելնին և իւրեանց մարմնոյ կարօտութիւնն կը մոռանան, Փրկիչն հրաշալի կերպիւ եօթն հաց և երկու ձուկ աւելի քան 5000 մարդոց մէջ կը բաժանէ, այնպէս որ ամենքն ևս կ'ուտեն ու կը յագենան. «կերին ամենեքեան և յագեցան։» Երեւակայեցէք թէ մի այսպիսի հրաշք այդ վիճակի մէջ գտնուող ժողովրդեան

վերայ ի՛նչ ազդեցութիւն կրնար ունենալ։ Կարելի է որ մի այդպիսի խումբի մէջ գտնուած լինէին սնպիսիներ որ Քրիստոսի իշխանաբար խօսելու վերայ, նորա Որդի Աստուծոյ կոչուելու վերայ, նորա յԱստուծոյ առաքեալ լինելու և աստուածային յայտնութիւններ ունենալու վերայ կրծիծաղէին կամ թերահաւատութեամբ կընայէին։ Բայց երբ այդ հրաշք տեսան կարո՞ղ էին այլ ևս երկմտիլ, տարակուսել թէ նա էր իրապէս Որդի Աստուծոյ և նորա իւրաքանչիւր մի բառ աստուածային պատգամ էր։ Աստուածային տնօրէնութեանց մէջ Հրաշագործութիւնն առժամանակեայ էր, մի որոշ նպատակի համար էր. երբ այդ նպատակ իրականացաւ, այլ ևս հրաշից պէտք չմնաց. երբ Քրիստոս իւր փրկարար տնօրէնութիւններ կատարեց, երբ սրբազան Առաքեալք Աւետարանն մինչև ի ծայր աշխարհի քարոզեցին, ամէն երկրի մէջ եկեղեցիք հաստատեցին, և Քրիստոսի վարդապետութիւն տնտնուրեք առաքինութեան այնպիսի պտուղներ յառաջ կրբերէր որ շատ աւելի հրաշալի և զարմանալի էին քան թէ հացի բազմացուցանելն քան թէ ջուրն ի գինի փոխելն. երբ նախկին քրիստոնէից համբերութիւն և ժուժկալութիւն, սէր և երկիւղածութիւն, անմեղանձ վարք և նեղող հոգի՝ հեթանոսաց մէջ իբրեւ չտեսնուած ու չլսուած բաներ կերևնային, և իմաստնոց հիացում և սքանչացում կըշարժէին, յայնժամ իրական հրաշքեր այլ ևս պէտք չէին քրիստոնէութիւնը հաստատելու համար։ Իսկ հաւատացեալ համար (ինչպէս կըյուսամ մեզ ամենիս համար) բոլորովին աւելորդ էր և է։ Մեզ համար քրիստոնէութիւն արդէն հաստատուած է, մեզ համար երկմտելու կամ տարակուսելու մի կէտ չկայ որ ստիպուինք նոր մի զգալի կամ մարմնաւոր հրաշքով մեր հաւատն զօրացնել։ Հաւատացեալ քրիստոնեայն հոգեւորապէս ամէն օր ամէն քայլափոխի հրաշք կըգործէ և հրաշք կըտեսնէ. նա Աստուծոյ հետ անդադար հաղորդակցութեան մէջ կըգտնուի. նա միշտ իւր ամէն ձեռնարկի համար Աստուծոյ հրամանը կըհայցէ և կըստանայ. նա միշտ իւր աղօթքներն պատասխանած կըտեսնէ, նա միշտ իւր երկրաւոր ընթացքի մէջ Աստուծոյ առաջնորդող ձեռքն կըտեսնէ. նորա հոգեւոր պէտքերն միշտ կըմատակարարուին Աստուծոյ անսպառ համբարներէն նոյնպիսի առատութեամբ և նոյնքան հրաշալի կերպիւ ինչպէս հինգ հազար մարդոց քաղց հինգ հացով և երկու ձուկով լցուցաւ։ Ճշմարիտ հաւատացեալ քրիստոնէի

վերայ Եկեղեցւոյ խորհուրդներն նոյնքան ահաւոր եւ վսեմ տպաւորութիւն կը գործեն որքան Քրիստոսի զգալի հրաշքներ՝ ականատեսից վերայ կը գործէին։ Դիտեցէք այն հաւատացեալ քրիստոնէի սիրան ու զգացումն որ երկիւղիւ եւ հաւատով յառաջ կը մօտենայ Ս. Հաղորդութեան. տեսէք սա որքա՛ն կը նմանի այն կոյր մարդոյն, որ երբ լսեց թէ Յիսուս այնտեղէն կանցնի, սկսաւ աղաղակել. «Յիսուս, Որդի Դաւիթ, ողորմեա՛ց ինձ։» Առաջ գնացողներ զնա կը սաստէին կ'ուզէին լռեցնել, իբր թէ ասել կուզէին. ամօթ է, անքաղաքավարութիւն է, բայց նա փոյթ չունէր այդ ձեւակերպութեանց համար. նա գործ ունէր իւր Փրկչի հետ. թող մարդիկ ծիծաղին, թող մարդիկ այպանեն, նա եւս առաւել կ'աղաղակէ, «Որդի Դաւիթ, ողորմեա՛ց ինձ։» Ո՞չ ապաքէն մեեւնոյն վիճակի մէջ կը գտնուի այն բարեպաշտ հաւատացեալն՝ որ իւր ծանօթներն ու մերձաւորներն բոլոր ծաղր ու նախատինք առ ոչ ինչ զրելով՝ անվեհեր կերպիւ կը մօտենայ Աստուծոյ Սուրբ սեղանւոյն, երբ սարկաւագի ձայնը կը լսէ «Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք։» Նա փոյթ չունի թէ այլք ի՛նչ կը կարծեն նորա մասին. դուցէ կ'ասեն կեղծաւոր է, դուցէ կասեն մեռապաշտ է. բայց նորա հոգը չէ. նա իւր Փրկչի հետ գործ ունի. իւր հոգւոյ կուրութիւնն Քրիստոսի փրկագործ Ս. Մարմնոյ եւ Արեան հաղորդութեամբն պիտի բժշկէ, ատանայի խորամանդութիւն եւ աշխարհիս պատրանք բազմաթիւ վէրքեր դրեր են նորա հոգւոյ վերայ, զոր նա պիտի Ս. Հաղորդութեան խորհրդեամբ հրաշափառապէս բժշկէ։ Այս մի օրինակ։ Ուրիշներ եւս կան։ Բայց այս մին ընտրեցի որովհետեւ խոստացայ Ս. Հաղորդութեան վերայ խօսել ձեզ հետ այսօր։

«Կերէն ամենեքեան եւ յագեցան։» Նախկին Եկեղեցւոյ երանաշնորհ սուրբ հայրապետք եւ գերիմաստ սուրբ հարք Քրիստոսի այս հրաշք Պատարագի Ս. Հաղորդութեան նախատիպ օրինակն կը համարին։ Ինչպէս այնքան փոքր կերակուրով հինգ հազարն աւելի մարդիկ կերակրեցան եւ դեռ տասներկու կողով մնացորդ հաւաքեցին, նոյնպէս Քրիստոսի Սուրբ Մարմնոյ եւ Արեան հաղորդութեամբ հազարաւոր եւ միլիոնաւոր մարդիկ հոգւով կը կերակրին եւ դեռ միլիոնաւորներ եւս կարեն կերակրիլ մինչեւ ի վախճան աշխարհի։ Մարմնոյ կերակուրի պիտանութեան եւ օգուտի վերայ ոչ ոք մինչեւ ցարդ որեւէ տարակոյս ունեցած է, ոչ

եւս հաւանական է որ երբէք մէկն ունենայ։ Բայց Ս. Հաղորդութեան հոգեւոր կերակուրի պիտանութիւն եւ օգուտ աւա՛ղ որ յաճախ կըմոռանանք եւ ստէպ մտաբերելու պէտք ունինք, մանաւանդ այսօր երբ Ս. Աւետարան մեզ այդ առարկայի վերայ խորհելու աւիթ կըտայ, եւ մանաւանդ որ գալող կիրակի Այլակերպութեան մեծ տօնն է. և գուցէ չատերդ, գուցէ ամենքդ ի Ս. Հաղորդութիւն բերէ։

Աւագ Հինգշաբթի երեկոյեան Տէրն մեր Յիսուս Քրիստոս իւր աշակերտներու հանդերձ Սիոնի վերնատան մէջ ժողոված՝ Հրէից ամենէն նշանաւոր ազգային եւ կրօնական տօնը կըկատարէր. որ է Զատիկ այն մեծ տօնն որոյ սկըզբնաւորութիւն թէպէտեւ պատմական էր, այլ նաեւ մի մեծ մարգարէական նշանակութիւն ունէր, եւ աւելի ճշդութեամբ Քրիստոսի մահուան նախատիպ և ստուեր էր։ Ինչպէս գիտէք երբ Աստուած ուղեց Իսրայելացիները Եգիպտոսէն և Փարաւոնի գերութենէն ազատել, պատուէր տուաւ որ իւրաքանչիւր Հրէի տան մէջ մի անարատ (այսինքն պակասութիւն չունեցող) մէկ տարեկան գառն մորթուի և նորա արիւն տան դրան սեմերի վերայ սրսկուի։ Աստուած Եգիպտացիներին իւրեանց անզգամութեան համար վերջին ծանր պատուհասն յուղարկեց՝ նոցա բոլոր անդրանիկ զաւակներն կոտորել տալով։ Իսկ Իսրայելացիներն այդ ընդհանուր կոտորածէն զերծ պահելու իբրեւ նշան՝ հրամայած էր որ գառին արիւնը տան սեմերի վերայ սրսկուի։ Ի յիշատակ այդ մեծ ազատութեան, տարին մի անգամ հանդիսով գառն կըմորթէին և բաղարջ հաց կուտէին, և այս տօնն էր զոր Հրեայք Զատիկ կըկոչէին, և զոր Քրիստոս Սիոնի վերնատան մէջ իւր աշակերտներով հանդերձ կըկատարէր։ Սակայն այս անգամ մինչ Հրեայք իւրեանց նախատիպ ստուերական տօնը կըկատարէին, Քրիստոս իսկական տօնը կատարելու կըպատրաստուէր. Քրիստոս էր այն անարատ տարեւոր Գառն որ պիտի յաջորդ օրն խաչի վերայ զոհուէր, և նորա արիւնը պիտի ազատէր բոլոր մարդկային ազգն Սատանայի գերութենէն եւ Աստուծոյ ընդհանուր պատուհասէն, որ պիտի դայ այն ամենի վերայ որ Քրիստոսի արեամբն փրկուած չեն, եւ սուրբ խաչի նշանովն կնքուած չեն։ Ուստի Հրէից ազգի վերջին Զատկի երեկոյեան Քրիստոս այդ մեծ տօնի նախապատրաստական մասն կըկատարէր սուրբ վերնատան մէջ. և այդ առթիւ հաստատեց Ս. Պատարագի խորհուրդն։ Բուն եւ իսկական Պատարագն այն

էր զոր, ինչպէս ասէ, յաջորդ օրն նա ինքն պիտի մատուցանէր առ Հայր ի վերայ Խաչին, վասն փրկութեան աղգի մարդկան («վասն զի դու ես որ մատուցանես եւ մատչիս եւ ընդունիս, եւ տաս Քրիստոս Աստուած մեր» ինչպէս քահանայն կաղօթէ)։ Իսկ այժմ մի միջոց ցոյց կըտայ, որով հաւատացեալք յամենայն դարս եւ ամենուրեք կարենան այդ Ս. Պատարագի արդիւնքն իւրացնել եւ վայելել։ Անցեալ կիւրակէ տեսանք թէ ինչպէս մենք մեր նախահայր Ադամէն հոգեւոր տկարութիւն եւ մեղք ժառանգած էինք. տեսանք նաեւ թէ ինչպէս, Քրիստոս որ մեր երկրորդ նախահայր Ադամ եղաւ, զմեզ որդեգրեց եւ մեր սկզբնական մեղքը ջընջելով՝ մեզ ժառանգութիւն թողուց արդարութիւն եւ հոգեւոր զօրութիւն։ Ադամէն ժառանգեալ մարդկային զառածեալ բնութիւն՝ իւր սուրբ Մարմնոյ եւ Արեան կազդուրիչ եւ զօրացուցիչ կերակրոն՝ նախկին երանաւէտ վիճակին հասնելու միջոց ընձեռեց, եւ զմեզ իւր փառաւորեալ Մարմնոյ կատարելութեան եւ չնորհաց ընդունելութեան արժանացոյց ի ձեռն Ս. Հաղորդութեան։ Հայր ու գինին մարդոյս մտնդեան գլխաւոր առարկաներն են, ուստի եւ յարմար միջոց խորհրդաւոր ներգործութեան ատուածային չնորհաց։ Զատկական տօնի համար յատկապէս պատրաստուած բաղարջ հացն առաւ, օրհնեց եւ իւր սեղանակից աշակերտներին տուաւ ասելով. «Առէ՛ք կերէ՛ք, այս է մարմին իմ»։ Նոյնպէս բաժակով գինին առաւ օրհնեց եւ տուաւ բազմականացն ասելով. «Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ։» Եւ ապա պատուիրեաց. «զայս արարէք առ իմոյ յիշատակի», արժանաւոր արարողութեամբ նոյնը միշտ կատարէք ի յիշատակ իմ մահուան եւ մեծ պատարագին։ Այսինքն, սրբագործեալ հացուգինին, որոյ մէջ անիմանալի կերպիւ ներկայ է փառաւորեալն Քրիստոս, մատուցանեմք առ Հայր եւ յիշեմք Քրիստոսի չարչարանք ու մահ որ մեզ համար կրեց, եւ ի սէր այդ անարատ զնեալ Գառին՝ խնդրենք թողութիւն մեղաց մերոց, եւ միանգամայն ճաշակելով ի նմանէ՝ միանամք Քրիստոսի հետ, եւ այնու նորա կատարելութեանց մասնակից եւ հաղորդ լինիմք։ Ահա այսպէս հաստատուեցաւ Պատարագի Ս. Խորհուրդ, որ Առաքելոց ժամանակէն ի վեր անընդհատ դարուց ի դարս կատարուած է ի լուութիւն եւ յիւրացումն արդեանց փրկագործութեան Քրիստոսի։

Ս. Պատարագի Խորհրդոյ վարդապետութիւն երկու էական

կէտեր կըպարունակէ որ ամէն ճշմարիտ հաւատացեալ պէտք է լաւ ըմբռնէ որպէս զի կարենայ վստահութեամբ վկայութիւն տալ իւր հաւատոյ եւ ընդունած դաւանանքի մասին, ըստ պատուիրանի Առաքելոյն Պետրոսի թէ. «Պատրաստք իցէք տալ պատասխանի ամենայի որ խնդրիցէ զբանն որ է վասն յուսոյն ձերոյ։» Նախ պէտք է իմանամք թէ մեր Եկեղեցւոյ կատարած Պատարագն ի՞նչ մտքով ըմբռնելու է. երկրորդ՝ թէ ի՞նչպէս հասկանալու է Քրիստոսի Մարմնոյ եւ Արեան ճաշակումն Ս. Հաղորդութեան մէջ։ Ա. Պետ. Գ 15։

Յայտնի է որ նախ քան զՔրիստոս եղած բոլոր զոհերն ու պատարագներ, թէ հեթանոսական եւ թէ հրէական, ըստ ինքեանց իրականութիւն կամ իսկութիւն չունէին. նոքա լոկ ստուեր եւ նախատիպ օրինակ էին միոյ միայնոյ Պատարագին ի վերայ Խաչին, որ Գողգոթայ լերան վերայ կատարուեցաւ, այդ զոհեր եւ պատարագներ կարէին միայն այնքան հաճելի եւ ընդունելի լինիլ Աստուծոյ, որքան նոքա Քրիստոսի տիեզերական փրկագործ Պատարագի ստուերն ու տիպն էին եւ նմա կ'ակնարկէին։ Իսկ երբ ի լրումն ժամանակի մարդկային ազգի դարաւոր հառաչանքն եւ բաղձանքն կատարեցաւ, եւ անարատ աստուածային սուրբ Գառն զենաւ ի վերայ Խաչին, երբ աշխարհիս փրկութեան մեծ Պատարագն մատուցաւ, եւ այնու մարդկային ազգն Ադամային անէծքէն ու դատապարտութենէն միանգամ ընդ միշտ ազատեցաւ. յետ այնորիկ բոլոր ուրիշ զոհեր ու պատարագներ և՛ Մովսիսական եւ՝ հեթանոսական, իւրեանց փոքրիշատէ ունեցած զօրութիւն եւ նշանակութիւն բոլորովին կորուսին, քանզի «ստուերն ի լոյս ճշմարտեցաւ։» Այժմ Խաչի Պատարագէն դուրս որեւէ ուրիշ պատարագ ոչ օգտակար կարէ լինել հոգւոյ փրկութեան համար, եւ ոչ ընդունելի է Աստուծոյ, «վասն զի դու ես որ մատուցանես, եւ մատչիս եւ ընդունիս եւ տաս Քրիստոս Աստուած մեր։»

Ապա, կըհարցուի, ի՞նչ է այդ որ քրիստոնէից եկեղեցիք միշտ կըկատարեն Պատարագ անունով։ Քրիստոնէական Եկեղեցւոյ Ս. Պատարագ՝ Խաչի Պատարագէն զատ կամ տարբեր չէ. մեր Պատարագ ոչ այլ ինչ է բայց եթէ Խաչի պատարագի ընծայումն եւ յիշատակութիւն, ոչ թէ նորա կրկնում որ անհնար է, այլ ինչպէս յառաջ ասացի, Քրիստոսի փրկագործութեան արդեանց իւրացումն է զոր Փրկիչն ինքն հաստատեց իւր չարչարանքէն անմիջապէս յառաջ

Սիոնի սուրբ վերնատան մէջ, ասելով «Զայս արասջիք առ իմոյ յիշատակի։»

Օրինակի համար երթէ Մանչէսթրի քաղաքապետութիւն առանձին հրովարտակաւ արտօնութիւն չնորհէ բոլոր նկարիչներին՝ ձրիաբար եւ ազատօրէն, երբոր ուզեն քաղաքիս մեծ պատկերասրահն մուտ գործել եւ այնտեղ գտնուած պատկերներէն օգտուիլ՝ ուսումնասիրելով եւ ընդօրինակելով. և միայն պահանջուի որ ամէն մի նկարիչ քաղաքապետութենէն մի տոմսակ ստանայ, որոյ վերայ նշանակուած լինի թէ այս ինչ անուն նկարիչ քաղաքապետական այս ինչ հրովարտակի համաձայն՝ արտօնեալ է Պատկերասրահին մէջ պարապել երբ եւ որքան ժամանակ որ նա ուզէ։ Այս ընդհանուր հրովարտակի չնորհիւ բոլոր նկարիչներ արտօնութիւն ստացած կըլլինին, բայց մի՞թէ որ եւ է նկարիչ կարող է այդ արտօնութենէն օգտուիլ, նորա արդիւնք վայելել՝ սոսկապէս իւր տանը նստելով, առանց իւր կողմանէ աշխատելու որ կարողանայ օգտուի. ո՞չ ապաքէն նա պէտք է երթայ քաղաքապետի Դուռն և թախանձէ որ ընդհանուր հրովարտակի միջոցաւ չնորհեալ արտօնութեան տոմսակն նմա ևս չնորհուի. ո՞չ ապաքէն նա պէտք է անձամբ յաճախ գնայ Պատկերասրահն եւ ամէն ջանք գործ դնէ այն տեղ շարուած նկարներէն օգտուիլ։ Միեւնոյն համեմատութիւնն է Քրիստոսի Խաչի Պատարագի՝ Ս. Սեղանոյս Պատարագի հետ։ Թողգոթայի ահեղ Պատարագի չնորհիւ համայն ազգի մարդկան՝ փրկութեան ընդհանուր հրովարտակ չնորհուեցաւ՝ յաւիտենական Պատկերասրահն ազատ մուտ գործելու իրաւունք տրուեցաւ, Երկնից դռներն բացուեցան առաջի ամենայն ազգաց եւ ազանց. բայց այդ ընդհանուր հրովարտակի արտօնութիւնն վայելելու համար մեզմէ կըպահանջուի որ մեր երկնային քաղաքապետի Դուռն գնանք, և վերոյիշեալ նկարչի պէս խնդրենք ու թախանձենք որ մարդկային ազգի չնորհեալ փրկութեան ընդհանուր հրովարտակի համեմատ մեզ ևս առանձնաբար եւ անհատաբար մուտ գործելու տոմսակ չնորհուի, այսինքն Խաչի սուրբ Պատարագի արդիւնքն, ի Քրիստոսէ հաստատեալ Սեղանի Պատարագովն՝ մեզ ընծայուի։ Քրիստոնէական Եկեղեցւոյ Սեղանի Պատարագն նման է իւրաքանչիւր նկարչի չնորհուած արտօնագիր տոմսակին, որ միայն այնքան զօրութիւն ունի, որքան այն հրովարտակն հաստատուն է, և որքան որ այն հրովարտակին կ'ակնարկէ։ Ս. Սեղանոյ Պատարագն

ուրեմն իւր զօրութիւն կ'առնու Քրիստոսի Խաչի Պատարագէն, և միայն այնքան ազդեցութիւն ունի, որքան որ Խաչի Պատարագին կ'ակնարկէ, և Խաչի Պատարագն կը ներկայացնէ: Մի և նոյն ժամանակ, որքան որ վերոյիշեալ նկարչին առանձին տոմսակ պէտք է պատկերասրահն ազատ մուտ գործելու համար, նոյնպէս ևս մեզ քրիստոնէիցս համար Եկեղեցւոյ Ս. Սեղանոյն Պատարագն անհրաժեշտ է Երկնից Արքայութիւն ազատ մուտ գործելու եւ սատանայի գերութենէն փրկուելու համար:

Չպիտի կարծենք թէ Եկեղեցին ինքնիշխան և ինքնագլուխ հաստատեր է այս Տոմսակ, այսինքն Ս Սեղանոյն Պատարագն: Տեսէք քահանայն հաստատութեան խօսքերէն վերջ առանձինն ի՛նչ աղօթք կըմատուցանէ. «Եւ զսոյն միշտ իւր յիշատակ առնել, պատուիրան աւանդեաց մեզ բարեբար Որդիդ քո միածին», և յետոյ կըյաւելու «Եւ արդ մեք Տէր ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ, յիշեմք զդորա որ վասն մեր զփրկագործ չարչարանս և այլն:» Այս այն պատուէրն է զոր Քրիստոս աւանդեց ասելով. «Զայս արասջիք առ իմոյ յիշատակի:» Այսինքն, երբոր ուղիղ դիտաւորութեամբ Քրիստոսի արտասանած հաստատութեան խօսքերը (Առէ՛ք կերէք, Արբէ՛ք ի սմանէ) խօսինք, և այնու հաց ու գինին հրաշալի և անբացատրելի կերպիւ ի Ս. Մարմին և Արիւն Քրիստոսի սրբագործենք, և մատուցանենք առ Աստուած, այնու մենք կըմիանամք մեր աստուածային քահանայապետին հետ ի մատուցումն այն մշտնջենական Պատարագի, զոր նա անդադար կըմատուցանէ մեզ համար, և միանգամայն ցոյց կըտանք գործով և մասնակցութեամբ թէ իրօք փափագող ենք Քրիստոսի փրկագործութեան արդիւնքն վայելելու, և այնու գոհութիւն տուած կըլլինենք այն մեծ Խաչի Պատարագի համար որով մենք փրկուեցանք:

Միւս կէտի վերայ ևս մի քանի խօսք ունիմ: Չենք անգիտանար որ հարիւրաւոր տարիներէ հետէ Եկեղեցւոյ մէջ սաստիկ վիճաբանութիւններ տեղի ունեցած են Ս. Հաղորդութեան վարդապետութեան վերայ: Առանց այդ ցաւալի և ապարդիւն վիճաբանութեանց պարագայներն յիշելու, կըրաւէ ասել թէ մարդիկ մեծամեծ սխալներ գործեցին այդ վիճաբանութեանց մէջ. որովհետև Ս. Գրոց պարզ խօսքերէն դուրս գնալով՝ զանազան փիլիսոփայական ոճերով

և սոսկ մարդկային մտաց հասկացողութեամբ բացատրել չանացին։ Այս վարդապետութեան հիմն է Քրիստոսի խօսքերն թէ «Այս է մարմին իմ, Այս է Արիւն իմ», և որովհետև Քրիստոս է ասողն, մենք այլևս իրաւունք չունինք հարցնելու թէ հացն ու գինին ի՛նչպէս կարէ Մարմին և Արիւն դառնալ. ոչ ևս իրաւունք ունինք փիլիսոփայական ոճով բացատրելու թէ ի՛նչ եղանակաւ հաց ու գինւոյ գոյութիւն կրփոխուի։ Հայաստանեայց Եկեղեցին ոչ պաշտօնապէս և ոչ անպաշտօն կերպիւ բնաւ փորձած չէ Քրիստոսի բանից սահմանէն դուրս ելնել՝ երկմտելով կամ փիլիսոփայօրէն բացատրելով զայն որ անմեկնելի խորհուրդ է. և խորհուրդ լինելէ կը դադարի երբ փիլիսոփոյական բացատրութեան ձեռնարկուի։ Հերիք է որ հաւատանք թէ զկնի սրբագործութեան, այդ հացն ու գինին գերբնական ներգործութեամբ և անմեկնարդելի կերպիւ, ըստ խոստմանն Տեառն, Քրիստոսի իրական Մարմնոյ և Արեան զօրութիւնն կը ստանան, և արժանաւորաբար ճաշակողք ոչ այլ ինչ ճաշակած կը լինին բայց եթէ զՄարմին և զԱրիւն Տեառն։ Թէ Հայաստանեայց Եկեղեցին ինչ աստիճանի ազատութեամբ վարուած է այս կէտին մէջ, յայտնի է այն պարագայէն որ զկնի սրբագործութեան բոլոր գործողութիւններն կատարելու, քահանայն անմիջապէս իւր հաղորդուելէն յառաջ կ'ասէ. «Զո՛ր օրհնութիւն կամ զոր գովութիւն ի վերայ Հացիս և Բաժակիս ասացուք։» Եւ մի՞թէ Փրկիչն ինքն ասած չէ «ես իմ հացն կենաց։» Այն Քրիստոսն որ այս խոսքեր արտասանեց, նոյն ինքն կընստի այժմ ի յերկինս ընդ աջմէ Հօր, և նոյն ինքն Ս. Հաղորդութեան մէջ իրապէս ներկայ է, որում երկրպագութիւն կը մատուցանեմք ասելով. «Հոստովանիմք և հաւատամ, զի դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ, որ բարձեր զմեղս աշխարհի։» Այս է Ս. Հաղորդութեան անաւոր խորհրդոյ համառօտ բացատրութիւն, որ Առաքելոյ ժամանակէն ի վեր մինչ իբրեւ ամենէն կարեւոր և կեդրոնական պաշտօն նկատուած է. և նորա այս մեծ կարեւորութեան պատճառաւ կրպահանջուի որ մանակցողք արժանաւոր կերպիւ պատրաստուին։ Ցաւալի է որ մեր Եկեղեցւոյ այս օրինաւոր պահանջ ժողովրդեան կողմանէ սխալ կերպիւ կը մեկնուի։ Որովհետեւ Եկեղեցին նախապատրաստութիւն կը պահանջէ և ժողովուրդն կը ծուլանայ պատրաստուիլ՝ շաբաթներով և ամիսներով եկեղեցւոյ մէջ սրբութիւն առնող չենք տեսներ թէպէտ եւ

ամէն կիւրակէ Ս. Պատարագ կըմատուցուի և եկեղեցիք բազմութեամբ լցուած կըլլինին։ Առաքելական դարու և նախկին եկեղեցւոյ սովորութիւնն էր որ եկեղեցւոյ մէջ բոլոր ներկայ եղողներ անպատճառ պիտի հաղորդուէին։ Իսկ այժմ երբ այսքան քիչ կըմատնեան Ս. Հաղորդութեան, պարտաւոր են աւելի մեծ պատրաստութիւն տեսնել. քանզի անպատրաստ և անարժանութեամբ ճաշակողն օգուտ չըքաղելէն զատ՝ մեծ մեղք ևս կըգործէ։ Պօղոս Առաքեալն առ Կորնթացիս գրած թղթոյն մէջ կասէ. «Այսուհետև որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեան Տեառն։ փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա ի հացէ անտի կերիցէ և ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ, զի ոչ խտրէ զմարմինն Տեառն։» Առաքելական հրամանի համեմատ կըպահանջուի հաւատացեալներէ որ նախապէս պատրաստուին խոստովանութեամբ և ապաշխարութեամբ, իւրեանց սրտերէն ամէն չար զգացում կամ ատելութիւն և հակառակութիւն հանեն, իւրեանց հոգին մաքրեն և յարդարեն որպէս զի կարենան արժանաւոր կերպիւ ընդունիլ զՈրդին Աստուծոյ։ Մեր տուներն ու բնակարաններն արտաքոյ կարգի խնամքով կըմաքրենք կըզարդարենք երբ մի մեծ հիւր մեզ կայցելէ։ Ո՞չ ապաքէն պարտինք աւելի մեծ խնամքով մեր սրտերն մեղաց աղտեղութենէն մաքրել եւ առաքինութեան պտուղներովը զարդարել երբ արքայից Արքայն պիտի գայ հանդչի մեր հոգւոց մէջ, ոչ թէ միայն մի քանի վայրկեան այլ որքան որ մենք զայն պահելու ցանկութիւն ունենանք։ Ուրեմն, սերեցեալք իմ ի Տէր, պատրաստեցէք ձեր հոգիներն՝ առաջիկայ կիւրակէին ձեր Փրկիչն և Աստուածն ընդունելու համար. պատրաստուեցէք պահօք, աղօթիւք և խոստովանութեամբ։ Եկէք և պատրաստեցէք ձեր սերտերն իբրեւ արժանաւոր օթեւան Որդւոյն Աստուծոյ, որ միւս կիւրակէի հրաշափառ այլակերպութեան օրն պիտի գայ հանդչի ի ձեզ. պատրաստ գտնուինք երկնային զուարթնոց հետ միասին ցնծութեամբ և ուրախութեամբ գոչենք. Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն. օրհնեալ որ Գալոցդ ես, որում փառս տայցուք ընդ Հօր և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս. Ամէն։

ԱՊԱՀԱՐՁԱՆ կամ ԱՄՈՒՄՆԱԼՈՒԹԻՒՆ

Ի ԳԵՐ. ՏԵՐ ՄԱՄԲՐԵ ԵՊԻՍԿՈՊՈՍԵ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ԿԱՆԽԱԲԱՆ

Հրապարակ ձգուած և մտքերն յուզող այս հակաքրիստոնէական խնդիրն դժբաղդաբար մեր մէջ ալ մեծ կարեւորութիւն ստացաւ, ինչպէս ստացած էր ուրիշ ազգաց մէջ՝ բարքերն աւրուած ատեն, և երկար վէճերու և հակառակութեանց պատճառ եղաւ։

Բայց այս խնդիրը ոչ կամահաճութեամբ, ոչ յաղթասիրութեամբ, ոչ այլոց օրինակով, ոչ բաղմաց վկայութեամբ և ոչ ինչևիցէ արտաքին փաստերով ու ապացոյցներով կրնայ կարգադրուիլ ու վճռուիլ։

Կամահաճութիւնը և յաղթասիրութիւնը քնաւ օգտակար բան չեն կարող ընել, առաւել խնդիրը կրկնճռոտեն, մտքերը կըպղտորեն և կրգայթակղեցնեն. օրինաց անհնազանդութիւն, ապստամբութիւն և անկարգութիւն կըսերմանեն, և խռովութիւնն ու հակառակութիւնը տեւական կընեն։

Այլոց օրինակը՝ զոր իբր ապացոյց յառաջ կբերեն այս խնդրոյն համար, զեղծում է և ոչ օրինաւորութիւն. այսինքն, այլք ըրած ըլլալնուն համար մեք ևս ընելու պարտաւոր չենք. այլք, և շատք իսկ՝ կրնան զեղծանել. պէտք է զգուշութեամբ քննել՝ տեսնելու համար թէ այն շատերուն ըրածը օրինաւոր և օգտակա՞ր է թէ ոչ. ասանկ առանց քննելու այլոց օրինակին հետեւիլ յորդորելով՝ շատ վնասակար բաներ մտցուցին ազգին մէջ՝ օգտակարը զոհելով. դէթ անոնցմէն խրատուեցէք իրրև բանական։

Բաղմաց վկայութիւնը՝ երբ օրէնսդրին խօսքին ու նպատակին հակառակ է, չընդունուիր. նոյն իսկ եթէ այն բազումը մեծամասնութիւն ալ լինի, խոտելի է. քանզի վկայածը ճշմարտութիւն չէ, այլ լոկ հաճոյք։

Բնազդին եթէ հարցնենք, նա ալ անասնական հակամիտութեանց կառաջնորդէ՝ մինչեւ որ հասցնէ ցնորքից և յիմարութեան։

Իսկ բանականութիւնն՝ ինքնին միայնակ՝ առանց աստուածային կրօնի բարոյական օրինաց լուսոյն՝ առ խարխափ գլորելով պիտի ընկնի բնազդին գերկը, թերեւս քիչ մը կոկելով բարեքելով, այլ ոչ երբէք օգտակար և պաղարեր

ընել կարենալու։ Ապա կրնայ դերադոյն Հեղինակին կամայ և հրամանին հեզութեամբ գլուխ խոնարհեցնել, հաստատ գիտնալով որ Նա անպէտ և ֆնասակար բան չը հրամայեր։ Անշուշտ այսպէս կրնենք ուրախութեամբ, եթէ ճշմարիտ քրիստոնեայ ենք։

Օրէնսդիր մը օրէնք դրած ատեն հպատակաց կամքը չը հարցներ. այլ անցեալոյն փորձառութիւնը, ներկային հարկը, ապագայ խաղաղութիւնը եւ հասարակաց օգուտը կը լինի օրէնսդրին առաջնորդ, և ըստ այնմ կը սահմանէ իւր օրէնքը։ Հպատակները կը պարտաւորին հնազանդիլ՝ թէեւ իրենց անկանոն յոժարութեանց և ապօրէն հաճոյից հակառակ լինի այն. անհնազանդը կը պատժուի։

Այս խնդրոյն ծանր պարագաները և իմ տկարութիւնս կը կասեցնէին զիս բառ մը անգամ արտասանելէ, եթէ պաշտօնս և քրիստոնէական Ս. Եկեղեցւոյ օգուտը չը բռնադատէին զիս դիտցածիս և կրցածիս չափ խօսելով զէթ պարտքս կատարելու։

Ողջամիտ քրիստոնեայ ընթերցողը անշուշտ չը պիտի սպասէ մենք ընդարձակ բացատրութիւն, զորս չենք խոստանար, այլ համառօտ չափաւորութեամբ, ամենուն հասկանալի կերպով և ամենուն օգտակար եղածը պիտի խօսիմ. ոչ քմահաճութեամբ և ոչ այլոց կամքն ու կիրքերը չոյելով, այլ քրիստոնէաբար՝ Քրիստոսի անսալով քան մարմնոյ։ Ուստի ընթերցողին ուշադրութիւնը կը հրաւիրեմ հետեւեալ առաջարկութեանց վրայ։

1. — Ի՞նչ է ամուսնութիւնը և անոր պայմանները։
2. — Ո՞վ է քրիստոնէութեան օրէնսդիրը։
3. — Ի՞նչ է քրիստոնէութիւն։
4. — Ո՞վ է քրիստոնեայ։

Որչափ որ այս հարցերը պարզ և ամենուն գիտցած բաներն են, այնչափ մեծ կարեւորութիւն ունին ներկայ խնդրոյն նկատմամբ։ Այս հարցերը կարճ կերպով այնքան պիտի բացատրենք, որչափ առաջարկեալ խնդրոյն բացատրութեան եւ հաստատութեան կարեւոր է։ Ասով կը յուսանք պատճառ տալ բարեպաշտ ընթերցողին, որ աւելի հաստատուն ճշմարտութեան հետեւի, քան առօրեայ, անցաւոր և ֆնասակար հաճոյից, որպէս զի ամեն հովէ շարժող տկար եղեգան պէս չը տատանի. և որպէս զի կատարելութիւնը անկատարութեան հետ չը փոխէ։

Ա

1. ԻՆՉ Է ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամուսնութիւնը բնութեան ամենաածադիր մի օրէնք է, որ երկու տարասեռ անհատներ կը միացնէ անխզելի կապով. տեսակը բազմաւորելու, աճեցնելու և յարատեւելու համար. որ Աստուծոյ արարչական հրամանին գործադրութիւն լինելով, հարկաւոր սուրբ և օգտակար օրէնք է:

Ամուսնութիւնը թէ որ պահանջած պայմաններուն մէջ կատարուի, սիրոյ, խաղաղութեան և երջանկութեան միջոցն է. օրինաւոր ամուսնութեամբ մարդուն միտքը կը-կեդրոնանայ իւր տան և սիրտը իւր ընտանեաց վերայ: Անով կը փարատին արտաքին վիշտերն ու տրտմութիւնները: Օրինաւոր ամուսնութեամբ կը դադրանայ մարդ հիւանդութեան ատեն կարեկից, քնքուշ և անկեղծ սրտէ յառաջացած խնամք, մխիթարիչ խօսք, կազդուրիչ գգուանք և սիրազեղ հոգածութիւն: Ամուսնութեամբ կ'ընդունի մարդ ծանր ղրաղմանց և վշտաց թեթեւութիւն, հոգնութեան հանգիստ, և աշխատութեան արդիւնքին օգտակար ու կանոնաւոր մատակարարութիւն:

Ամուսնութիւնն է միջոց և օրէնք բարոյական սրբութիւնը պահելու, շատ տեսակ ախտերէ զերծ մնալու և տեսակի յաջորդութեամբ կեանքն յարատեւելու: Տիեզերական Սուրբ օրէնք մի է այն, որ ընտանիքներ կը կազմէ, ազգեր ու ժողովուրդներ կը հաստատէ, երկիրը շէն ու պաղաբեր կը պահէ: Օրինաւոր և սուրբ ամուսնութեան օգուտը շատ է. բայց մէկ խօսքով ըսենք թէ -- Նա է գործակից ըլալ Աստուծոյ, որով մարդիկ իրարու հետ ընտանեկան եւ ազգակցական սիրով կապուելով՝ կ'արդիւնաւորեն ու կը յարատեւեն կեանք եւ կը շարունակեն Աստուծոյ նպատակը. — գոյութիւնը —: (Ծն. Ա. 13, 14) Այս նպատակաւ է Թերեւս Սրբազան Առաքելոյն յիշատակաց արժանի խօսքը թէ. Այս խորհուրդը մեծ է, (խորհուրդ կենաց) բայց ես Քրիստոսի եւ Եկեղեցւոյ անքակտելի սիրոյն եւ անբաժանելի միութեանը կը նմանցնեմ:

Ամուսնութեան առաջին պայմանն է ներքին համակրանք, որ առաջին տեսութեամբ կը զարթնու եւ կը հասկցուի, եթէ նախապէս ցանկութեան կիրքը հրդեհած չէ ներքին զգացման սրբութիւն. աւելորդ և վնասակար է յաճախ և առանձին տեսակցութիւնները: Երկրորդ. քրիստոնէական կրթութիւն, վարուց սրբութիւն, բարուց քաղցրութիւն եւ եր-

կու կողմէն անկեղծ ու սուրբ սէր ունենալու են։ Երրորդ, Ամէն բանի մէջ հաւատարիմ լինելու են։ Չորրորդ. Իրարու օգտին անձնադիր լինելով՝ ո՛ր և է կերպով իրարու վնաս հասցնելու չեն։ Հինգերորդ. բոլոր մտադրութիւններին և զգացումներին իրենց որդւոց և գերդաստանին զարգացման ու բարկրթութեան նուիրելու են՝ համաձայնութեամբ գործելով։ Վեցերորդ. Որեւէ նիւթական նպատակ, չահ և մարմնական կիրք չը պիտի լինի ամուսնութեան շարժառիթը, ասանկ արտաքին նիւթական բաներ վաղանցուկ լինելով՝ չուտ կ'եղծանին և կ'արատաւորեն ամուսնական սրբութիւնը, և կըվրդովեն խաղաղութիւնը։

Այս պայմաններէն չեղելու ամուսնութիւնը՝ օգտակար չը լինելէ զատ կըդառնայ թշուառութեան աղբիւր, ընտանեկան խաղաղիկ յարկը կըլայ վէճի, հակառակութեան և կռուոյ ասպարէզ. ողբոց և հառաչանաց բանտ. քաղցրութեան տեղ դառնութիւն կըտիրէ, և պատճառ կըտայ ամուսնական նպատակին հակառակ անպատշաճ խորհուրդներու դատերու և բաժանումներու։

Երբեմն հին ատեններ, ամուսնութեան օրէնքը իւր սկըզբնական պարզութեան, սրբութեան և միութեան հակառակ փոփոխութիւններու տակ ձգեցին մարդիկ։ Բայց բնաւ չը կրցան անոր սրբութիւնը, օգտակարութիւնն ու վսեմութիւնը պահել, Յիսուսի Փրկչին մերոյ կրմնար այս օրէնքը վերահաստատել իւր նախկին բնական սրբութեան, վսեմութեան և օգտակարութեան մէջ, բարձրացնելով երկու ամուսիններն նուաստ վիճակէ՝ բարոյական պատուաւոր և մարդավայել վիճակի։

Մարդիկ առաւել հեշտախտութեան կրից անսալով՝ քան քանական ու բարոյական օրինաց, չափազանց նուաստացուցին ամուսնութիւնը...։ Նոյն կրից թելադրութեան անսալով — կնոջ դիրքը բարձրացնելը — ըսին, բայց քանզի ընութեան հակառակ ճանրայ բռնեցին և քրիստոնէական օրինաց պարկեշտութիւնը արհամարհեցին, ուստի չը յաջողեցան. կինն այն չափ չփացուցին, որ կուռք չինելով՝ անգործութեան մատնեցին և գլորեցին անարգութեան գուբը և այսօր ելից հնարքը կըկարծեն գտնել ապահարզանի մէջ, որ աւելի անբարոյականացուցիչ և անպատուաբեր է։ Անփորձ և անհեռատես մարդիկ մեր մէջէն ալ ջերմ պաշտպան կեցած՝ կ'ուզեն ազգին մէջ մտցնել ապահարզանի անարգութիւնը. սակայն դէթ մտածելու են թէ դա քրիստոնէական օրինաց հակառակ է։

Բ

Ո՞Վ Է ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՍԴԻՐԸ

Օրէնսդիր մը որչափ բարեբարոյ, հպատակասէր, տաղանդաւոր և հեռատես լինի, այնքան հաւատարմութեան և վստահութեան արժանի է. հպատակներն ալ այնքան սիրով և հաճութեամբ պէտք է հնազանդին անոր՝ եթէ յիմարացած չեն։

Ամեն քրիստոնեայ գիտէ թէ քրիստոնէութեան հիմնադիրը և օրէնսդիրն է՝ բանն Աստուած Յիսուս Քրիստոս, որ է իմաստութիւն անսահման, ամենազէտ և ամենաւրէր. Նա է սէր անհուն, որով իւր բարձրութենէն խոնարհեցաւ, և ի սէր հպատակաց իւր անձը զոհեց. ապա Նա անխորհուրդ և ինքնակար բան չէր հրամայեր։

Արդ մեր Արարիչ, Տէր, Փրկիչ և թագաւոր Աստուած կը հաստատէ քրիստոնէութիւնը իւր միակ միջոց մարդկութիւնը իւր սկզբնական սրբութեան վիճակին և բարձր արժանեաց վերածելու և իրեն հետ միացնելու։ Հաւատացեալ ճշմարիտ քրիստոնեայն այս անունէն կը պատկառի, երկիւղած պարկեշտութեամբ և որդիական սիրով կը հնազանդի։

Քրիստոս Աստուած է, ապա ամենագէտ է, Նա գիտէր ապահարզանի, կնաթողութեան և՝ որ նոյն է, բազմակնութեան ինքնանէրն ու չարիքը, Նա գիտէր անոր բարոյականի հակառակ՝ խստասիրտ ժողովրդեան մէջ արմատացած յետամուտ սովորութիւն լինելը. գիտէր, որ այդ չար սովորութիւնը բանական մարդուն ընտանեկան մարմնոյն բարւոք կազմութեան հակառակ էր. գիտէր որ այդու կինը կը նուաստանայ, որ մարդուն կէսը լինելով անոր ալ անարգանք էր։ Վերջապէս Արարիչ Աստուած գիտէր որ կնաթողութիւնը ապականուած բարուց հետեւանք՝ միանգամայն և պատճառ է. անոր համար սկիզբէն արու և էգ ստեղծեց, որ երկուքին սէրը իրարու վրայ կեդրօնանայ և իրարու օգնական լինին, քանզի չէր ուզեր անոնց բարուց ապականութիւնը։ (Մեր օրով փորձով իսկ կը տեսնենք, որ մաքուր բարք ունեցող տեղեր, արու և էգ համեմատական են. շատ անգամ ալ աղջիկը հազուագիւտ կը լինի. մինչ բարքերն աւրուած տեղեր կինը կը բազմանայ։)

Նոյն արարիչ բանն Աստուած, օրէնսդիրն քրիստոնէութեան, մերժեց այդ չար սովորութիւնը և ամուսնութեան

նախկին անլուծանելիութիւնը վերստին հաստատեց։ «Երկինքն ու երկիրը դիւրին է որ անցնին, քան թէ օրէնքէն մէկ փոքրիկ կէտ ընկնի. Ով որ իւր կինը արձակէ և ուրիշ մը առնէ՝ շնութիւն կընէ, և ով որ արձակուած կնիկը առնէ, շնութիւն կընէ։» Հետեւեալ վկայութիւնները ուշադրութեամբ և հաւատարմութեամբ կարդալով՝ կըտեսնենք որ այս մասին Տիրոջը կամքն ու հրամանը բացարձակ է։ (Մաթ. Ե. 32։ ԺԹ. 3-9.։ Մարկ. Ժ. 5-12։ Ղուկ. ԺԶ. 17-18։ Հռով. Է. 2, 3։ Ա Կորն. Է. 10, 12, 39։ Մաղաքէ. Բ. 14։) «Աստուծոյ միաւորածը մարդ չը բաժնէ։» «Կինը օրէնքով էրկանը կապուած է, եթէ երիկէն բաժնուելով ուրիշի հետ ամուսնանայ՝ շնութիւն կընէ»։ Կրնան բաժնուիլ, բայց երկուքն ալ չեն կրնար ամուսնանալ. պիտի նորէն իրարու հետ հաշտուին». և այլն։ Այս խօսքերն այնքան բացարձակ են, այնքան վճռական են, որ բացառութիւն չեն վերցներ։

Կինը մարդուն կէսն է, երբ օրէնքով, պատշաճ ժամանակի մէջ և որոշեալ պայմաններով երկու կէսը Աստուծոյ հրամանին համեմատ միանալով կ'ամբողջանան, ալ այնու հետեւ բաժնուիլ չըլլար։ Այս է արարիչ Աստուծոյ ամենաբարի կամքը և մարդասէր հրամանը, այս է մարդուն անհատական կենաց և սերնդոց բարեպէս աճման համար օգտակարն ու պատշաճը։

Այս սուրբ և սրբութեան առաջնորդող օրէնքը մարդուն տուողն Աստուած է, խորհող մարդը գիտէ թէ ամենաբարին Աստուած վնասակար բան չը պատուիրեր, բայց անոր օրինաց օգուտը վայելելու համար լիովին հնազանդիլ պէտք է։ Անոր օրէնքներն իրարու հետ կապ ունին, եթէ մէկը զանց ընենք, չենք կարող սահմանած օգուտն ու օրհնութիւնը վայելել։ Եթէ երբեմն ամուսնութեան մէջ չարիք, անհամաձայնութիւն, խռովութիւն եւ այլն կըպատահին, պատճառն Աստուծոյ օրէնքը չէ. այլ մեր օրէնքին չը հնազանդիլը, ընտրութեան մէջ ըրած պակասութիւններս, կամ ծնողաց, մերձաւորաց և բարեկամաց խրատը մտիկ չընելով կամապաշտութիւններս, և կամ թէ կենցաղավարութեան մէջ ունեցած պակսութիւններս, քանի որ պակասութիւնը մերն է, Աստուծոյ օրէնքը փոխել ուզելը ողջմտութիւն չէ. պարտաւոր ենք մեր յանցանքին պատիժը քաշել անտրտունջ, ինչպէս որ կըկրենք մեր ուրիշ սխալմանց հետեւանքն եղող վնասներն ու ցաւերը։

Մարդիկ մինչ ցարդ մասնաւոր դիպաց կամ զեղծմանց առ-

ջեւ թուլցած՝ հաստատուն օրէնքներու մէջ փոփոխութիւն ընելով ի՞նչ շահեցան, փորձառութեան վրայ հիմնուած ազգային բարի եւ օգտակար սովորութիւնները փոխելով իբրեւ հին եւ կոչտ՝ ի՞նչ օգուտ բերին ազգին. — Ո՛չ ինչ. վնասէ զատ բնաւ օգուտ մը չըտեսաւ ազգը — : Զեղծումը զեղծում կըծնանի, չարիքով բարիք չը դար — : Այժմ կորսուածին վրայ կ'ողբան, կ'ուզեն նորէն ձեռք ձգել՝ ու չեն յաջողիր : Առաջները այդ զեղծումները ընդունել խրախուսողները այժմ պղտաբերած չարիքը նոյն իսկ իրենց վրայ, իրենց տան մէջ տեսնելով՝ սկսած են նախկին տոհմային սովորութիւնները ջատագովել, երանի՛ թէ կարողանային լսելի ընել . . . . . : (Արաբական ընտիր առած մը կըսէ թէ, — Ամեն նորութիւն համ մը ունի, բայց թէ՛ կանուխ եւ թէ՛ ուշ հինին դառնալ հարկ կըլլնի :)

Ուղիղ դատողը դիտէ թէ զեղծումը ուղղելով, եւ նախնական վիճակին վերածելով օգտակար կըլլնի եւ ոչ թէ զեղծումը պաշտօնապէս հաստատելով, որ անսպառ զեղծմանց եւ ընդհանուր ապականութեան կառաջնորդէ, որուն կըհետեւի բարի օրէնքին արդար պատուհասը, իբր պտուղ զեղծմանց : Այս է փորձառական պատմութեան մեզ սովրեցուցածը, զոր այսօր իսկ չըՀայեաց դիտողը ակներեւ կըտեսնէ. (բայց ոչ յաղթասէրն ու կամապաշտը :) Ուր որ չըկայ Աստուծոյ օրինաց հեզութեամբ անսալ եւ խոնարհութեամբ հպատակիլ, այլ յանդուգն դատողութիւն եւ ամբարտաւան զանցառութիւն, հոն չարիքն ու պատուհասը տիրած են : Կիրքերով չը խաւարած մտքերն ու աչքերը կ'զգան ու կըտեսնեն զայս՝ եւ սրտի ցաւօք կըհառաչեն . . . :

Յիսուս Քրիստոս այնպէս ու այնչափ կըճանչնայ մարդը, որ նոյն իսկ մարդն ինքզինքը այնպէս ու այնչափ չը ճանչնար. Նա գիտէ մարդուն կարողութիւնները զորս ինքը տուած է, գիտէ նաեւ չարին սերմանած ապականութեան սերմերը, կ'ուզէ որ մարդ իւր բոլոր կարողութիւններ յաջողութեամբ գործադրելով՝ չորցնէ չարին բոյսը, ոչընչացնէ ապականութեան գործերը : Ուստի Յիսուս իւր աստուածային ամենագիտութեամբ ամեն ժամանակի ամեն մարդկան համար տուաւ իւր օրէնքները. միմիայն թէ մարդիկ կամին սիրով եւ յօժարութեամբ կատարել : Նա իւր անսահման հեռատեսութեամբը անլուծանելի սահմանեց ամուսնութեան կապը, ինչպէս եղած էր ի սկզբան, (Նա ետքէն մտած զեղծումը վերցուց, նախկին մաքրութեան վերածեց,) որ մարդը ազատէ կեանքը մաշեցնող եւ ապա-

կանող ցանկութեան կրից անողոքելի դերութենէն, և չափաւորութեան ու համեստութեան մէջ պահէ, և ամուսնութեան սրբութիւնը հեշտախտութեան պղծութենէն ազատէ: — Կին արձակելը հեշտախտութեան հետեւանք է —: Քրիստոնէութիւնը սրբութեան, սուրբ սիրոյ և պտղաբերութեան օրէնք է: (Շարունակելի.)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԱՆԻՍԱՑԷՆ

Հոգեշնորհ Տէր Եղբայր ի Քրիստոս.

Աստուածային և մարդկային կամօքն ու կոչմամբ՝ անարժանաբար ընդունած քահանայութեան պաշտօնիս քառասունքին երրորդ օրն էր երբ յանկարծ ստացայ Ձեր պատուական կրօնաթերթն, այն ժամուն՝ երբ նորալուծ կեանքիս փշաբերդ դրան սեմին վրայ տխուր և խօլ խոհերով կը ծփայի, բաղդատելով տկար վիճակս պաշտօնիս մեծութեան ու ծանրութեան. և եկեղեցւոյս ներկայ վիճակ՝ անցեալին հետ: Երբ կը տխրէի և միանդամայն ժամանակիս այլ և այլ խառնադաւան զգացմանց և մոլութեանց բուռն հոսանքին առջեւ խիստ տկար դտնելով ինձ նման պաշտօնեայի ջղաբար բազուկներն, ահա այս ժամուն, մտացս այսպիսի սասանման և շփոթութեան ժամուն, կարծես «մի վհատիր, մեծ է Աստուծոյ ողորմութիւնը» քաջալերը ձայն մ'ալ Ձեր լուսամրի թերթերէն որոտաց ինձ: Այնչափ գոհ և ուրախ եղայ Ձեր թերթերէն որ չեմ կրնար լիովին արտայայտել: Ահաւասիկ, ըսի, ինծի պէս մարդ մը քահանայ մը՝ ինչպէս անխռով իր պաշտօնին փարած, ինչպէս գեղեցիկ կը խորհի և կը գործէ գրիչով և կղերին և աշխարհականին առհասարակ հոգեպարար սնունդներ մատակարարելով: Երանի թէ մեր ամեն կարող գրիչներ միայն մարդկութեան հոգին կրթելու և փրկելու ոճն զգային ու գրէին: Ահա մեր աստի հաւատարիմ մամուլն անդամ շեղ և անտարբեր ոճով կը դեգերի բուն մարդկային դաստիարակութեան շուրջ. անոր՝ կրօնի, Աստուծոյ և հոգիի գաղափար յայտնեցի՛ր, ինչ որ ճշմարիտ մարդկութեան սահմանն է, իսկոյն կը տխրի, երես կը դարձնէ ընդհանրապէս այնպիսի տառեր շարելէ և արտատպելէ. ինչու՞, պատճառն յայտնի է, թղթիս սահման չնչերը որ ամենը մանրամասն արտադրեմ: Վերջապէս շատոնց մտադիր էի Ձեզ գրել, և ողջադուրեալ Ձեր բարեսէր հոգին. սակայն ինչ ինչ տարադիպութիւններէ կ'արգիլուէի, և ահա այս անգամ Ձեր և Արժ. Տ. Վռամշապուհ Եղբօր նորայայտ ազատ գաղափարներն արգելթափ

ըրին զիս, և կ'սատիպուիմ դրել ինչ որ է յայնմ և իմ աղատ զգացումներս։

Հայ քրիստոնեայ Եկեղեցին, ինչպէս և բոլոր քրիստոնեայ ազգաց եկեղեցիք, բացի Աւետարանի էական և հիմնական վարդապետութեան մասէն, այո՛, բարեփոխութեան պէտք ունի։ Բայց դժբախտաբար խոչընդոտներ և արգելքներ շատ կան քանի որ դեռ անտարբերութիւնն ու նախապաշարմունքն հոյն իսկ կղերական դասուն մէջ կըտիրե, և լուրջ ուսումնասիրութեան հանդեպ գաղափարի միութիւն չկայ։ Թող որ դեռ ռամկութեան՝ տգիտութեան և մոլութեան տղմին մէջ թաղլտկող հասարակութիւնն, իր նորատի իմաստակներովն՝ ու՞ր փռելու ու՞ր չորցնելու է։

Այո՛. արդի ժամանակիս մէջ մանաւանդ, բոլոր եկեղեցականաց կանամբի ըլլալը աւելի օգտակար և օրինաւոր է, քան թէ ամուրի մնալը. սակայն ի՞նչպէս կրնամք այս կամ այն գաղափարի մասին անպատճառ պարտաւորիչ օրէնք մը դնել։ Երկուքին մէջն ալ ազատ է մարդս։ Ճշմարիտ ամուրիութիւնն կամ կուսակրօնութիւնն, ըստ դրոց, բոլորովին Աստուածատուր շնորհք մ'է. Յիսուսի «որոց տուեալ է» խօսքը՝ զայս կ'ապացուցանէ. ազատ է մարդ և այս շնորհքին նուիրուած արժանաւոր եկեղեցական մը կրնայ քահանայութեան և եպիսկոպոսութեան պաշտօն վարել. նորէն իր կուսութեան ուխտին դէմ մեղքն իրենն է, ապաշխարանքն ալ իրենն է, փրկութիւնն ալ իրենն է, և կորուստն ալ իրենն է. մանաւորին սահեցմամբ ընդհանուրին ազատ ուխտն չեղծանիր կարծեմ։ Ինչպէս ամուսնացեալ կղերն ալ իւր կեանք սուրբ և խառնակեցութեանէն զուտ և անարատ պահելու հարկին և օրինաւորութեան մէջ գտնուելով հանդերձ կրնայ իր ամուսնական հաւատարմութեան ուխտն ալ դրժել և խառնակ կեանք ունենալ։ Խնդիրը Մաշտոցի կամ կանոնի վրայ չէ. լուրջ խոհականութեան վրայ է. լաւ խորհելու է ինչպէս աշխարհականի մը ամուսնութենէն առաջ, այնպէս եկեղեցականի մը՝ ձեռնադրութենէն առաջ։ Լաւ խորհելու և քննելու է թէ այս մարդ արժանապէս ուսեալ և առաքինի՞ է, քաջ բժիշկի պէս անոր ամեն ներքին դիդերքը գտնելու է, մոլութեան ախտը՝ ժառանգական երբեմն ախտի պէս մինչեւ իր ցեղին մէջէն փնտռելու է, մի՛ հաւատար թէ երբ այս ինչ ախտին մոլին է, ձեռնադրուելէն վերջ պիտի զգաստանայ։ Սակայն ասոնք ո՞վ պիտի քննէ և ստուգէ. անշուշտ աւելի ընտրող ժողովուրդը, ժողովուրդը պէտք է շատ անաչառ և ուղղադատ գտնուի այս մասին. այս իմ բարեկամն է, այս շատ գիտուն է, այս շատ լաւ շարաբան կը կարդայ, և կամ մեղք է, ապրուստ չունի, թող երթայ ապրի ըսելով, և ուրիշ ասոնց նման պաշտպանութիւններով պէտք չէ կոյր զկուրայն քահանայացու կամ վարդապետցու ընտրելով, ինչպէս նաև ժողովուրդն ընտրելէն և ձեռնադրել տալէն վերջ անոր մէկ բնածին կամ եկամուտ մոլութեան վրայ մրմռալու

և վատահամբաւ ըլլալու իրաւունք չունի։ Նոյնպէս լաւ ուշադրութիւն ընելու է ընծայացուի մը տարիքին վրայ, անփորձ երիտասարդ մէկը բնաւ կոչելու ու ձեռնադրելու չէ, պակաս թող ըլլայ անոր երիտասարդութեան կորովի ժամանակը, երբ մոլութեան մասին ալ կորովի է, ժիր և աշխոյժ և գործունեայ մարդը տարիքին չնայիր. մինչեւ վերջ կրգործէ, ի՞նչ ծերեր կան որ անդուլ կբխորհին և կրգործեն մինչև իրենց կենաց վերջին շունչը իրենց ազգին և եկեղեցւոյն օգտին համար, և ի՞նչ երիտասարդներ կան որ ի սպառ ծոյլ և անտարբեր և հեշտամոլ լինելով իրենց կորովի ժամերը մոլութեանց կըմատնեն, և փոխանակ օգտակար ըլլալու վնասակայ կըհանդիսանան Ազգին և Եկեղեցւոյն։ Եւ աւելորդ չէ յիշել թէ «Մանուկ կրօնաւոր՝ անջան որս է սատանայի». և թէ՝ «լաւ է անգործ մեղու քան ժիր պիծակ»։

Այսպիսի խորհելու կէտեր չեն պակսիր շրջախոհներու համար, և ամփոփենք յայսմ մեր խօսք։ Ազատ է մարդս աշխարհական և եկեղեցական՝ ամուրի կամ ա՞ուսնացեալ մնալ։ Ըստ գրոց, ինչպէս պարտաւորիչ օրէնք մը չէ վարդապետաց կամ եպիսկոպոսաց ամուրի մնալը, այնպէս և պարտաւորիչ օրէնք մը չենք կրնար դնել ամուսնութիւնն այն կղերցու և կղեր անձանց որք ի սէր արքայութեանն Աստուծոյ ճշմարտապէս կոյս մնալ ուխտած են։ Առաքեալին «պարտ է եպիսկոպոսի միոյ կնոջ այր լինել» խօսքը, նոյն ժամանակի հեթանոսութեան բազմակնութեան և խառնակեցութեան չտանդին առաջն առնելու համար է. ոչ թէ անպատճառ անոնց՝ ամուսնութիւնն պարտաւորիչ օրէնք կրդնէ. ապա թէ ոչ՝ ինքն իր ամուրի մնալովը, և կուսութեան մասին յարգանաց խօսքերովը՝ հակասութիւն ըրած կըլլայ, որ չէ ներելի այնպիսի հոգեշնորհ և բանիբուն առաքեալի մը։ Այսու ամենայնիւ, եթէ հաղիւ կ'երեւի հիմա ճշմարիտ կուսակրօնութեան շնորհքն, լաւագոյն է ամուսնանալն և եպիսկոպոսաց, սակայն միշտ ձեռնադրութենէ առաջ, որովհետեւ ամեն կերպով փորձուած և փորձաքարուած հասակի մէջ ձեռնադրուածի մը անդէպ և աւելորդ է ամուսնութիւնն։ Անպատճառ կոյս մնալ փափաքող մը, մինչև որ փորձառութեան հասակը չլրանայ, պէտք չէ ձեռնադրել։ Ըստ իս փորձառութեան հասակ պէտք է նկատուի 30-35 տարին։ Թերևս շատերը փառասիրութեան մը տենչով կըմղուին կոյս ու վարդապետ ըլլալու որոշման, կարեւոր է այսպիսիք միշտ վանքերու մէջ պահել, և գրականութեամբ զբաղեցնել ցայն հասակ, մինչև որ ճշտուի թէ ով է կարողն և փափաքողն Աստուծոյ Արքայութիւն համար իր անձ ներքինի ընելու։

Եկեղեցական բարեփոխութեանց և ուրիշ կարեւոր նիւթերու վրայ ուրիշ անդամ տեսնուելու փափագով, կ'ստորագրեմ Նամակս, մնալով շնորհակալու Ձեր ազատամիտ հրատարակութեանցն,

Մանիսա, Սեպ. 13, 1901.

Աղօթակից
ՄԵՍՐՈՊ ՔՀ. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՍՏԱՆԷՆ

(Մեր պատուական Ռուսահայ բաժանորդաց ի միաւորութիւն կրնիրատարակեմք հետեւեալ գրութիւն զոր ստացած եմք Թիֆլիսի Գրաֆնական Պաշտօնէութենէն։)

Գերապատիւ Հայր Սուրբ.

Ձեր հրատարակած «Հայ. Եկեղեցի» կրօնաթերթը անխափան թոյլ է տրվում մուտք գործելու Ռուսաստանի սահմանը, և Ձեր բաժանորդներն անարգել ստանում են իր ժամանակին, վասն զի ցենզուրական կոմիտէն ցայժմ արգելած չէ նորա մուտքը Ռուսաստանում։

Մնամ յարգանօք, խոնարհ ծառայ,

Թիֆլիս, Յուլիս 16 1901։ Ա. ՔԻՇՄԻՇԵԱՆ.

ԱՋԴ

Ի գիտութիւն մեր Եգիպտոսի պատուական բաժանորդաց՝ կը ծանուցանեմք որ մեր Եգիպտոսի գործակալ Արժ. Տեր Եզնիկ քահանայ Պալուճիէն ստացած ենք շնորհակալութեամբ ամբողջ երկու տարուայ (1900 եւ 1901) բաժանորդագիներն։ — Խմբագրութիւն *Հայ-Եկեղեցի* կրօնաթերթի։ *Մանչէսթր, Սեպտեմբեր, մ* 1901։

ԱԶԴ

Կրօնաթերթիս անցեալ տարուայ թիւերն այլ ևս բաժանորդագրութեան պայմանաւ չեն ծախուեր. այլ Ա.–Ժ թիւերն միասին կը վաճառուին՝ անկազմ 4 Շիլինգի (5 Ֆրանքի). գեղեցիկ կանաչագոյն լաթակազմով՝ ոսկեզօծեալ վերնագրով՝ 5 Շիլինգի (6 Ֆրանքի):

Յետայսու նոր բաժանորդագրութիւն կընդունուի միայն ներկայ տարուոյս Յունուարէն կամ Յուլիսէն: